



խնայուած կը լինի առ այժմ:

«Դերձակութեան վարժութիւնը կը շարունակուի վը-  
ճարեալ վարպետի մը առաջնորդութեամբ, և մինչեւ հի-  
մա կատարուած աշխատութիւններն աշակերտաց զգես-  
տուց պատրաստութեան վրայ կայացած են:»

\* \* \*

Որքանոցը հայ ազգին ջերմ համակրանքին յանձնա-  
բարեւէլ յետոյ, պիտի չվարանինք մեր համոզումը յայտնել  
ընդդէմ Մանչէսթրի խնամակալութեան մէկ որոշումին  
որուն նպատակն է այդ կրթական հիմնարկութիւնը դրա-  
մական հաստատուն ապահովութեամբ օժտել:

Անցեալ երեք տարիներու շրջանին մէջ խնամակա-  
լութիւնը կարող եղած է 200 անգլիական ոսկի խնա-  
յել և անով հիմնել պահեստի դրամագլուխ մը զոր հե-  
տըզհետէ առ նուազն մինչեւ 5,000 ոսկիի հասցնելու  
պիտի ջանայ: «Այդ գումարը տարեկան 200էն մինչեւ  
250 ոսկի տոկոս բերելով կրթական-Որքանոցին շարու-  
նակութիւնը այլ եւս ո՛ր և է երկիւղի ու վտանգի պիտի  
չ'ենթարկուի:»

Վաճառականներուն միտքը ընդհանրապէս բարոյա-  
կան շահագիտութեանց անընդունակ է: Կրթական հաս-  
տատութիւն մը կուզեն կազմակերպել այնպէս ինչպէս ա-  
ռետական տուն մը զոր իրենց զաւակներուն ժառանգու-  
թիւն պիտի թողուն, որդիէ որդի շարունակելու առաջա-  
դրութեամբ: Ո՛չ. ազգի մը կեանքին կը ներկայանան պա-  
րագանք ուր չափազանցօրէն դրականութիւնը կրնայ ժո-  
ղովուրդին մեծամեծ փեսաներ հասցնել: Երբ արտակարգ  
ահեղ պատահարէ մը յետոյ հազարաւոր վիրաւորեալներ  
սփռուին գետինը, այդ դժբաղդները դարմանելու համար  
կազմուած խնամակալութեան մը պարտականութիւնը  
ենթակն մտածել պիտի ըլլայ եւ ոչ թէ ապագան: Որչափ  
հնար է շատ թուով մարդ փրկել մահուընէ ահա՛ դարմա-  
նատար մարմին պարտականութիւնը: Արդեօք խնամա-  
կալութիւն մը պիտի ըսէ՞ր «ամէն խելացի մարդ գիտէ որ  
ո՛ր և է հիւանդանոց չի կրնար հաստատուն համարուիլ ա-  
ռանց որոշ դրամագլխոյ:» Եւ այս խելացիութեան ապա-  
ցոյցը տալու համար, ձգե՛ր որ վիրաւորեալներուն մէկ  
մասը անդեղ եւ անսնունդ մեռնին, որպէս զի խնայուած  
դրամովը հաստատուն դրամագլուխ մը ձեռք բերուի եւ  
անոր տոկոսովը քսան երեսուն տարի վերջ հիւանդները  
ապահովաբար դարմանուին: Մանչէսթրի խնամակալու-  
թիւնը այս մտածութիւնը ունի մեր որբերուն վիճակին  
ի տես: Արտակարգ պատահար մը 50,000 որբ թողուց  
ազգին, այդ դժբաղդներէն որչափ հնար է անմիջապէս  
շատ թուով փրկել, զանոնք ապրեցնելով եւ կրթելով,  
ահա՛ խելացիութիւնը, ահա՛ ազգին պարտականութիւնը:

Խնամակալութիւնը առաջադրած է 5,000 ոսկի ա-  
ւելցնել, Կիպրոսի Որքանոցին ապագան ապահովելու հա-

մար. բայց երբ այդ գումարը ամբողջացած ըլլայ, այլ  
ևս օգուտ մը պիտի չունենայ 1895-96ի որբերուն: Ա-  
մենայն լաւատեսութեամբ իսկ հաւանական շթուիր որ  
տասը տարիէն առաջ հնարաւոր ըլլայ 5,000 ոսկիի գու-  
մարը ձեռք բերել. ու տասը տարի վերջը Կիպրոսի որ-  
բանոցն ալ, համանման նպատակով ուրիշ հաստատու-  
թիւններ ալ կրնան փակուիլ, առանց ո՛ր եւ է անպատե-  
հութեան: Կոտորածներէն ի վեր հինգ տարի անցաւ. երբ  
տասը տարի եւս անցնի ա՛լ 1895-96ի բոլոր որբերը ա-  
մէնքն ալ չափահաս երիտասարդներ եղած են: Ուրեմն  
այս տասնըհինգ տարուան ժամանակամիջոցին մէջ է որ  
ազգը կատարելիք բացառիկ պարտականութիւններ ունի:  
Կիպրոսի Որքանոցը այսօր 200 ոսկի աւելցուցած է,  
պէտք է փափաքինք որ այդ գումարը անմիջապէս որբերու  
կրթութեան գործածուի: Իրեք տարուան մէջ վեց որբ ա-  
ւելի կը պահուի 200 ոսկիով, եւ ազգը երեք տարի վերջ  
նախնական լաւ դաստիարակութիւն մը ստացած և ձեռ-  
արուեստ սորված վեց երիտասարդ աւելի կրնայ ունե-  
նալ: Հայութեան համար աւելի օգտակար է 200 ոսկի  
տասը տարի անշարժ պահելով 250 ոսկիի բարձրացնել,  
թէ՛ զայն անմիջապէս գործածելով վեց երիտասարդ եւս  
պատրաստել, որոնք մինչեւ տասը տարուան լրանալուն  
արդէն մէյմէկ ընտանիք կազմած կ'ըլլան եւ ազգին 10-  
15 ալ զաւակ պարգեւած: Իսկ հինգ հազար ոսկին ալ  
երբ մէկ կողմէն հաւաքուելով մէկ կողմէն գործածուի,  
տաս տարուան մէջ հայ ազգը կրթուած քանի մը հարիւր  
երիտասարդ աւելի կունենայ, եւ անշուշտ քանի մը հա-  
րիւր ալ նորածիլներ:

Հայ ազգին մարդ պէտք է աւելի քան թէ դրամ:

### ՏԵՐՎԻՇԸ

Հին գերեզմանատունը ծովուն վրայ կը նայի, և կա-  
պուտակ հորիզոն մը կը ցոլցայ խիտ առ խիտ նոճիներուն  
մէջէն որոնք անտառ մը կը ձեւացընեն: Մահաշշուկ լուռ-  
ութիւն մը կը պաշարէ զիս, եւ խաղաղութիւն մը որ կեան-  
քէ աւելի տխուր է՝ վասն զի ջնջում, ոչնչացում կը քարո-  
զէ: Ի՞նչ ընեմ խաղաղութիւնը, կ'ըսէի ես՝ միայնակ պը-  
տրտած ատենս, եթէ զայն պիտի գտնեմ բոլոր կրքերուս  
ոչնչացմամբ միայն և եթէ ան ներդաշնակութիւն մը չէ  
կենդանութեան:

Կը քալէի առանց նպատակի, մշտադալար թփիկները  
դիտելով՝ որոնց մէջէն մողէզներ դուրս կը սողոսկէին, եւ  
մերթ ծովուն նայելով՝ ուր լուսոյ հրաշք մը կը ծփար:

Երկայն գմբխոսեայ ժապաւէններ ամպածեւ հրափայլ  
սիւններու փաթթուած հորիզոնին վրայ կը թափթփէին,

ճանազայթներու խաղեր կը շողային ալիքներու վրայ, եւ սոկեզօժ կապերտներ կը ծաւալէին հեռաստանին առաջը: Երկինքը բոցազարդ ժամ մը դարձած էր, և կը սպառէր անյայտ Հոգւոյ մը որ պիտի գար պատարագել:

Գետինը նստայ՝ մտնելոյ մը մօտ, լուսաթափախ աշուրներս ուղղեցի դէպի վերջալոյսը որ թաղմանական շքեղութեամբ կը փողփողէր հիմա: Չիս դարձեալ կը խրոտէր այն աղօտ գաղափարը, զոր վերջալոյսի պահուն սակայ կ'ունենամ, թէ ահա կեանքը կը վերջանայ: Եւ այդ մոգական հեռաստանը, նարօտաներկ երփներփնութեամբ, կը խաբէր զիս ու կը քողարկէր սոսկալի դատարկութիւնը անծանօթ միջոցին՝ զոր բնաւ պիտի չը ճանչնայի:

Շշուկ մը լսեցի ետեւ և դարձայ նայեցայ: Երկայնահասակ մարդ մը վերէն կուգար, քարուտ արահետէն, կամաց կամաց կ'իջնար Ղուրանի տնատներ բարձրաձայն արտասանելով: Եւ նոյնչափ ելեւէջ մը կ'օրօրէր անոր բարբառը:

Երբեմն երբեմն կը կանգնէր ճամբուն վրայ, երկար և հաստ բիր մը զարնելով գետինը, առջեւը ուղիղ բռնած, եւ ձայնը կը բարձրանար նոր զօրութեամբ, նոր եռանդեամբ:

Դաժան կերպարանք մը ունէր ան, խոր եւ խիստ հայեացք՝ որ կարծես միայն գիշերային մթութիւնը զննած էր: Յօնքերը սեւ նետերու նման էին, առատ գանգուրներ ուսերուն վրայ կ'իյնային ածուխի սևութեամբ, և վերջալուսի թափառական ցոլքերը կայծեր կը ցայտեցընէին անոնցմէ:

Երկար վերարկու մը կը կրէր ասուեայ սպիտակ շապկին վրայէն՝ զոր մեծ գօտի մը կը պնդէր մէջքին բոլորը: Եւ խոշոր սրածայր հողաթափներ մերկ ոտքերը կը պաշտպանէին սուր քարերուն դէմ: Փոշուով սպիտակացած էին:

Տերվիշը զիս տեսաւ և իր վերձանութիւնը չընդհատելով մօտեցաւ ինծի. յետոյ կանգ առաւ, ձեռքով բարև մը տուաւ և ժպտեցաւ: Ինչ անճոռնի ժպիտ մը ունէր. նշանակ մը շնութեան եւ խորամանկութեան: Ճեղքուած բերանը սուր եւ անագորոյն ատամանց շարք մը կը ցուցընէր, և մեծ մօրուքը կը ճապողէր կուրծքին վրայ: Քամի մը բարձրացաւ, և ամբողջ զիսակը ծածանեցաւ տագնապալից կերպարանք մը տալով անոր: Հին Արևելքի զաւակներէն էր որ ազգերու կը սպանան ահաւոր աղէտքներ, անլսուր բօթեր մարգարէանալով: Կը յանդգնին արինաբիբ եւ աստուածակերպ վեհապետներու յանդիման ելլել կոպտաբար, եւ յանդիմանել իրենց եղեանալից օրտերը:

Եկաւ քովս նստաւ ընտանեբար, ցուպը մօտիկը երկընցուց և նկատելով որ չեմ խօսիր:

— Ինչո՞ւ չես խօսիր, զաւակս, հարցուց չար ծիծաղով մը:

Վերջալոյսը ցոյց տուի:  
— Իրիկուն կ'ըլլայ, այս ժամուն միշտ տխուր եմ:

Գլուխը թօթվեց՝ ինծի ցուցընելու համար որ կը հասկնար:

— Դուն երիտասարդ ես, ըսաւ, ինչո՞ւ մահուրնէ կը վախնաս: Դեռ երկար կեանք ունիս:

Երե՞նը նայեցայ— դէմքը փոխուած էր: Հայեացքը կակուղ երազանքով զեղուն կերևնար, վաւառտ շրթունքները զանութեամբ կը ձգտէին:

— Ո՞վ կ'ըսէ քեզի թէ մահը երկիւղ կը պատճառէ ինծի. պատասխանեցի նեղացած: Տխուր եմ՝ վասն զի կը հասկնամ որ օրերը այսպէս պիտի գան ու պիտի երթան, անընդհատ իրարու պիտի յաջորդեն, և սակայն ես երբեք պիտի չգտնամ այն բաները որոնց այնչափ կը փափաքիմ՝ երկար առնէ ի վեր:

— Որ և իցէ բանի մը փափաքիլը, կրկնեց ան, յիմարութիւն է, խակութիւն է: Դեռ երիտասարդ ես, անփորձ ես, աւելցուց խորունկ խորունկ հառաչելով:

Բույլ մը լուծեցէ ետքը նորէն սկսաւ:

— Աշխարհ ընդարձակ գերեզմանատուն մըն է, որչափ քալես ծայրը վերջը չես գտնար: Հոգ կը պտակին ամենքն ալ, թէ՛ հարուստը և թէ՛ աղքատը, թէ՛ մեծը և թէ՛ կրտսերը, թէ՛ խենթը և թէ՛ խելօքը—խտրութիւն չկայ: Եւ ամենուն փափաքն ալ փորերնին կը մնայ, ոչ ոք իր նպատակին կը հասնի: Առ գաւազանդ ու գնա, վերջին տեղդ գերեզմանն է:

Յանկարծ ձայնը բարձրացուց ու կորովի աշխուժով մը պոռաց:

— Դուն այստեղ փառաւոր քաղքի մը մէջ ապրեր ես, և անշուշտ մայրիկդ շփացուցեր է զքեզ ամէն ցանկացածդ կատարելով, և այսպէս անխելահաս մանուկ ես հիմա: Դուն կը կարծես որ կարող ես փափաք, բաղձանք ունենալ. թօթվէ՛ ինքզինքդ: Աստուած ամէն ինչ է, ամէն ինչ ան կը տնօրինէ. ի՞նչպէս ուրեմն կրնաս բան մը փափաքիլ: Ինչ որ Ան տայ՝ առ ու գոհացիր, և ատկից զատ ոչինչ պահանջէ: Չեղք ամէն տեղ մի երկնցըններ, մի գուցէ կարիճներ խայթեն զայն:

Մէկ ծունկը վեր քաշեց և արմուկը երկնցուց անոր վրայ: Ծոցէն քոսկ մը հանեց լի ծխախոտով, ինծի ալ հըրամցուց: Սկսանք ծխել:

Խաւարասէր միջատները երևան կ'իլլէին, կը խլրտէին քարերու տակ, եւ մթութիւնը կը թանձրանար նոճեստանին մէջ: Արեգական տեսիլքը կամաց կամաց կ'ազօտանար, եւ ամպեղէն ճարտարապետութիւնը կը քայքայէր: Երբեմն նորանշան, անմեկնելի ձայներ կը թռկէին գերեզմանատան խորութիւններէն, եւ բնութեան առեղծուածը աւելի ահաւոր կ'երեւնար հիմա, աւելի խորհըրդաւոր վհատութիւն մը կ'ընկճէր հոգիս եւ տարտամօրէն կը կրկնէի թէ ոչ ոք պիտի լուծէր զայն: Ահա զիշերը կուգար, ու վաղը դարձեալ առաւօտ պիտի ըլլար, նոյնօրինակ յաջորդութիւն մը ներկայացընելով սովորական իրաց եւ եղելութեանց՝ լոյս եւ մութ, յոյս եւ յուսահատութիւն, ուրախութիւն եւ վիշտ, կեանք եւ մահ. այս էր ստու-

գութիւնը, այս էր նպատակը անբաւ տիեզերքին:

Մօտս, գետնին վրայ, մեռած թիթեռնիկ մը նշմարեցի: Անոր փոքրիկ որովայնը դատարկուած էր եւ թեւերը կէսէն աւելի մաշած: Մըջիւններ կը վազվզէին, կ'իջնէին կ'ելլէին վրայէն, ու կը ջանային քաշքշել տանիլ զանի: Մտմտացի. Ո՞ր է տարբերութիւնս այս չքուտի անասնիկէն:

Տերվիչը դարձաւ ինծի եւ մուսի թանձր ոլորը մը արձակելով ըսաւ.

— Ես բոլոր կեանքս քաղքէ քաղք պտրտելով անցուցի, աշխարհիս չափը առած եմ: Ոտքերս անապատներու աւազին մէջ թաթխեցի, գետերու եւ ծանծաղներու մէջ: Արիւնշաղախ եղած գալլախազները կոխտտելով, եւ տատակներ եւ երէզներ՝ ուր օձերը միայն կը խորտին եւ քարերու տակ կը մնան գաղտնիքներու պէս: Կաշիս պատառ պատառ եղաւ լեռնային առապարիւն վրայ, եւ իմ ճամբաս շատ անգամ կարմրցուցի: Ողորմութիւն խնդրեցի, բայց գթութիւն՝ ոչ ոքէ: Երկրիս հեռուները գացի սրբազան տաղեր երգելով, ամէն տեղ Աստուծոյ անունը փառաբանելով: Պալատներու առջեւ կանգ առի, ուր ամբարտաւան հարուստ մը կը յղփանար, եւ անձանձիր կրկնեցի Մարգարէին սպանալիքները: Ծառաները որոնք դրան յօտ նստած էին, ինծի դրամ տուին որպէս զի երթամ, բայց իմ ձայնս չընդհատեցաւ ու տխուր աղաղակը զեռ երկար հնչեց: Իշխանաւորը զուրս ելաւ, ձին նստաւ ու հեռացաւ առանց զիս սաստելու:

Ազգիւրներու մէջ նստայ եւ աղքատութիւնս տեսան ամէն անոնց որ իրենց տներէն կուգային, կը վայելէին հովանաւոր խաղաղութիւնը եւ կնոջ մը ձեռքէն կը ստանային իրենց կերակուրը: Զարմացան իմ առաքինութեանս վրայ եւ ոչ ոք համարձակեցաւ զիս քամահրել: Վասն զի ես երազի կը նմանիմ, կրնամ թէ՛ բարենշան ըլլալ թէ՛ չարագուշակ: Ո՞վ կրնայ Աստուծոյ ուղարկածը քամահրել: Իմ զգեստներս անգամ սուրբ են, եւ իմ աղօթներս զուկներու վրայ կը թափթփին արեւու կենդանարար ճառագայթներու նման: Ինձմէ կը սպասէին օրհնութիւն, բժշկութիւն եւ յաջողութիւն:

Ես յաճախ ձեռուրներս երկնցուցի եւ հրաւիրեցի Աստուծոյ օրհնութիւնը—բայց իմ ձայնս ո՞րչափ զօրութիւն ունի, ո՞րչափ կրնայ ազդել անյայտ ճակատագրին վրայ: Հովին պէս աներեւոյթ է, եւ ուրկից որ գայ՝ այնպէս պէտք է ընդունիլ: Կողբերու անիւները կը կտտրէ, տունը կը կործանէ մեր զխուս վրայ, եւ ինչ կրնանք ընել:

Բժշկութիւն չնորհելու համար աղօթք ըրի, եւ շփեցի ցաւագար անդամները: Սակայն անոնք որ առողջութեան կը ցանկան կեանքի վայելքները լիովին ճաշակելու մտք՝ պախարակելի են, կը մեղանշեն: Աստուած կեանքերնիս կարծրած է գիտութեամբ, եւ պէտք չենք աշխատիլ անոր վախճանը յապաղցընելու:

Վա՛յ յիմարներուն որոնք յաջողութեան կը փափա-

քին, վա՛յ անմիտներուն որոնք թռչուններու ճամբան կը փնտռեն: Յաջողութիւնը է եւ այնպէս կ'երթայ ինչպէս կուգայ: Աստուած արհամարհելով կը ներէ յաջողութեան սր նաւու մը պէս կը քայլէ՝ մէջ մը մէկ ափը մէջ մը միւս ափը խորխափելով: Աստուած խտրութիւն չի դնել ձախող եւ յաջող բախտերուն միջեւ:

Այն հին քաղաքները, որ առաջ մեծ թագաւորներու բնակարան էին, հիմա անոնց փառքին փոշին դարձած են. բարձր սիւները գաւազաններու նման խորտակեցան, պալատները խոտերու դաշտ դարձած են. եւ քամին միայն այնտեղ կենդանութեան ձայն ունի. արեգական տակ ընդարձակ անապատ մը կ'այրի, անոր փոշին ժողովուրդ մը պատրաստած է իր մանրած ոսկորներով: Ինչ է ուրեմն մէկ հոգույ փառքն ու մեծութիւնը, քանի որ ամբողջ ազգեր իմ հողաթափո կը սպիտակացընէին եւ լուութիւնը շնչեր էր անոնց բոլոր դործերուն յիշատակները:

Ես, առանց շատ ցոյց տալու թէ ո՞րչափ ուշադրութեամբ մտիկ կ'ընէի անոր խօսքերը, առջևս կը նայէի այս մենաստութեան պահուն: Բայց Տերվիչը ուսս թօթվեց քաղցրութեամբ, և յանկարծ հարցուց.

— Դուն Հայ ես, այնպէս չէ՞:

Գլխու նշանով մը հաստատեցի:

Այն ատեն տեսակ մը մեծ վայելուչ ճոռոմաբանութեամբ, որ զիս դողդոջացուց, խօսքը շարունակեց.

— Հայ քրիստոնեան պէտք է բնաջինջ ըլլայ, իր ժամանակը ա՛յ հասաւ: Ճամբուս վրայ տեսայ անոր խողխողմանը տեսութեան. կը խողխողէին ինչպէս ոչխար մը իր մորթին մէջ: Ատենօք քրիստոնեան զօրաւոր էր, անոր գոռոգութիւնը ահաւոր էր. բայց զուրկ Աստուծոյ ճշմարիտ հաւատքէն՝ ա՛յ ստնակոխ պիտի ըլլայ ճշմարիտ հաւատացելոց գարշապարներուն տակ: Հիմա ա՛յ ոչինչ են Հայերը, մըջիւններու չափ ոյժ չունին: Անոնց հոգիները զիշեր ցորեկ կ'աղաղակեն, բայց ոչ ոք կը լսէ: Անոնց բոլոր մանուկները վիժածներ են և պիտի չապրին: Անոնց կիները զուր տեղը ծիծ ունին, կաթ պիտի չտան: Բոցը և դանակը կը շողան, և հողը մոխրակոյտ դարձաւ: Ես տեսայ, ու չգթացի: Նայեցայ ու չսասանեցայ: Աստուած ուզածը կ'ընէ, անոր առջին մեր կեանքը ոչինչ է, եւ իր կամքը անհաս: Թո՛ղ տուր քրիստոնէութիւնը՝ որ ալ պատուտած չապիկմըն է, ա՛յ որդիս, և հագիր իսլամի սուրբ զգեստը: Աստուած կ'ողորմի քեզ, քանի որ այսպէս կ'ուզէ, չե՞ս տեսնար:

Այսպէս ըսաւ ան: Բերանը փրփրեր էր բարձրաձայն խօսելէն, եւ լանջքը կը հեւար ճերմակ պատմուճանին տակ:

Ընկճող, խղճող երկիւղ մը հոգիս ջախջախեց: Տերվիչին երեսը, հակառակ զարհուրելի բացազանչութեանցը՝ հանդարտ, անկրակ կ'երևնար: Ես հասկեցայ բոլոր Արևելքի ցաւերուն պատճառը, հասկեցայ ինչպէս արհաւիրքը կը տիրապետէր ամէն կողմ.—բուն մեղաւորն էր

այն արհամարհանքը որով նայած են մեր նախնիք  
կեանքին, չնչին բանի մը, վաղանցուկ խոտի պէս: Ա-  
ւազի հատիկ մը եւ զուրկ կարեւորութենէ, կ'ապրինք եւ  
կը մեռնինք Աստուծոյ կամքովը, առանց իշխանութեան  
մեր ճակատագիրը զեկամարելու: Եւ այնչափ դիւրանցուկ  
ենք՝ որ չ'արժեր մեր գոյութիւնը պահպանել այն հոգա-  
ծութեամբ սրով թանկագին իր մը կը պահպանենք:

Մէկէն ի մէկ սիրտս ըմբոստացաւ, զղրկեցաւ. եւ  
մտնալով քիչ մը առաջուան թուլութիւնս ու յուսահատու-  
թիւնը որ վերջալոյսի օրհասէն ինծի կ'անցնէր ու կարծես  
հոգիս բռնաբաժ կ'ընէր, մահուան փափաքը կը ներշնչէր  
ինծի, մտովին ազազակեցի:

—Ո՛չ, սիրելի է կեանքը: Պէտք է ապրիլ, պէտք է  
վայելել այն յոյսերն ու բարիքները որոնք միշտ ունայն  
եւ միշտ ցանկալի պիտի երեւան: Չեղբ ձգելու համար,  
զանոնք, խնայելու չենք մեր ջանքը եթէ ոչ մեզ՝ գէթ մեր  
որդւոց համար: Պէտք է պայքարիլ ուզենք, յօժարինք  
մեռնիլ՝ բայց միայն կեանքը պաշտպանելու նպատակաւ:

Եւ կը զգայի որ իմ տոհմս կը բազուէր առանձնու-  
թեան մարդուն սոսկալի մարգարէութեան դէմ, ան որ ան-  
նուանելի փափաքը ունեցած է ապրելու եւ ապրած է մին-  
չեւ հիմա: Պիտի չմեռնի, կ'ըսէի ինքնիրենս:

Վերջալոյսը բոլորովին շիջեր էր, եւ կախածոյ ամ-  
պերը թուփ գոյն մը առեր էին: Ճճիներու ձայնը կը զօ-  
րանար, եւ անոյշ մթնութիւնը խաղաղ հովուերգութիւն  
մը կ'եղանակէր սիրոյ, հանգստեան, անդորրութեան: Ոտ-  
քի ելայ. Տերվիշին աչուրները կը պլպլային խաւարին  
մէջ եւ կիսաբաց բերանը կը ժպտէր: Չեղացի բարեւ մը  
տուփ եւ սկօայ դէպի ծովեզրը իջնել: Գերեզմանի մը մօտ  
թաւրինջխոտ կը բուսներ, քանի մը շիւղ փրցուցի քաղց-  
րահոտ տունկէն եւ զայն մասներուս մէջ դարձրնելով ճամ-  
բաս շարունակեցի:

Գանգաղ ալիք մը երբեմն երբեմն ցամաքը կը հարուս-  
ծէր՝ խորունկ ու միօրինակ խոխոջմամբ մը, մինչդեռ բը-  
լուրներուն ծայրերը լոյսեր կը սկսէին վառիլ ու ծաղիկ-  
ներու նման փթթիլ: Եւ ես ատեն ատեն կը հոտոտէի  
թուրինջխոտի շիւղը եւ կը մրմռայի հաճոյքով:

—Ինչ անոյշ, ինչ սփոփիչ հոտ է:

**Վ. ՍՎԱՃԵԱՆ**

**ՀԱԼԷՊԻ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՍԼԸ**

Նախորդ թուով տեղեկացուցինք թէ սուլթանը Հա-  
լէպի կուսակալ նշանակած է Էնիզ փաշան, Տիարպէքիբի  
նախորդ կուսակալը: Էնիզ փաշա յուլիս 6ին գաղտագողի  
իր պաշտօնատեղին մեկնեց է: Պոլսոյ զեսպանները ի-  
մանալով այս անուանումը, Հալէպի հիւպատոսներուն  
անմիջապէս ազդարարած են իրենց թարգմանները նոր  
կուսակալին բարի գալուստ մաղթելու շղթիւ: Դեսպան-  
ները գործնական բողոք մը կ'արձակեն սուլթանին որո-  
շումին դէմ. որոշում որ շատ չարագուշակ կը թուի կիլի-  
կիոյ ապագային համար: Բիւթէրի հեռագիր մը, յուլիս  
18 թուականով, կը ծանուցանէ թէ սուլթանը զեսպա-  
նական բողոքներուն ո՛ր եւ է կարեւորութիւն ընծայելու յօ-  
ժարակամ չէ:

Էնիզ փաշա երբ 1895ին Տիարպէքիբի կուսակալու-  
թեան կոչուեցաւ, այդ նահանգին քրիստոնեայ ժողո-  
վուրդը միահամուռ բողոքեց այդ անուանումին դէմ: Շատ  
չանցած ահիզ դէպքերը հաստատեցին թէ ժողովուրդը  
որքան իրաւունք ունէր վրդովելու. նոյն տաղնապին մէջ  
կը զանուիւնք հիմակ ալ: Այդ անցեալին համառօտ պատ-  
մութիւնը ահա կը յեշեցնենք, քաղելով զայն Ֆրանսայի  
արտաքին գործերու նախարարութեան կողմէ 1897ին  
Խորհրդարանին ներկայացուած Դեղին-Գիրքէն: Կ. Պոլ-  
սոյ զեսպանական մարմինն, ինչպէս եւ Հայոց մտքերու  
խողովման պատճառները շատ դիւրահասկնալի պիտի ըլ-  
լան այս պաշտօնական տեղեկութեանց ընթերցումէն  
յետոյ:



Երբ 1895 հոկտեմբերի առջի օրերը Տիարպէքիբ  
կիմացուի թէ առժամեայ վալի Էնիզ փաշան այդ նա-  
նանգին կուսակալ անուանուած է, քրիստոնեայ ժողովուր-  
դը տակնուվրայ կ'ըլլայ: Տիարպէքիբի ֆրանսական դեր-  
հիւպատոս Պ. Մերիէ քրիստոնէից սոսկումին թարգմանը  
կը հանդիսանայ հետեւեալ հեռագիրներովը զոր կը ղրկէ  
Կ. Պոլսոյ զեսպան Պ. Գամպոնին:

**Տիարպէքիբ 4 հոկտեմբեր 1895**

Առժամեայ վալի Էնիզ փաշային վալի անուանումը  
ծանր տպաւորութիւն մը յառաջ բերաւ քրիստոնէից վը-  
րայ, որոնք գիտեն այդ պաշտօնէին իրենց նկատմամբ ու-  
նեցած թշնամական զգացումները:

**Տիարպէքիբ 5 հոկտեմբեր**

Էնիզ փաշայի անուանումին համար շնորհակալու-  
թեանց հեռագիր մը ղրկուեցաւ սուլթանին: Կրճնական

Հասարակութեանց պետերը և քրիստոնեայ երևելիները որոնք հրաւիրուեցան միանալ այդ հեռագրին, նախ փորձեցին փախուստ տալ, բայց եղած ստիպումին վրայ չհամարձակեցան իրենց ստորագրութիւնը մերժել ուղերձի մը զոր զապօթիէ մը կը ներկայացնէր, եւ որ, ինչպէս կ'ըսուի, նոյն ինքն Էնիզ փաշայի զրգմամբը խըմբագրուած է,

Տիարպէքի 6 հոկտեմբեր

Քրիստոնեայ ժողովուրդը զայրացած է Հասարակութեանց պետերուն եւ երևելիներուն որոնք իրեն ստորադրել տուին շնորհակալութեանց հեռագիրը: Ժողովուրդը եկեղեցիները փակեց, ծանր խռովութիւններ կը վախցուի, որոնց պատասխանատուութիւնը Վալիին վրայ պիտի իյնայ:

Տիարպէքի 7 հոկտեմբեր

Այսօր շուկան, ինչպէս եկեղեցիները փակուեցան: Յօյքը կը շարունակուի իբր բողոք: Կը վախցուի որ միւսիւմանները պարագայէն օգտուին Քրիստոնէից դէմ ելլելու համար: Զօրքը զէնքի ներքէ է. բայց կացութիւնը չծանրացնելու համար, Վալիին որ իր սխալը կը զգայ, զօրքին միջամտել պիտի տայ երբ ալ ճար չլինայ: Ամբոխին յարաճուն կատաղութիւնը հանդարտեցնելու համար Վալիին ինչ ընելը չը գիտեր:

Տիարպէքի 9 հոկտեմբեր

Կրօնական Հասարակութեանց պետերը որոնք Էնիզ փաշայի անուանումին առթիւ շնորհակալութեան հեռագիր մը ստորագրած էին, սուլթանին ուղղուած, նոր մըն ալ ստորագրեցին իրենց Պատրիարքներուն հասցէին, որով կ'ոչնչացնեն առաջինը, իբր ժողովրդին կամքին հակառակօր: Այս առաջուժը վերջացաւ անիշխանական վիճակը որ հինգ օրէ ի վեր կը տիրէր քաղքին մէջ: Ամբօխը ցրուեցաւ, եւ շուկան այս առտու վերաբացուեցաւ: Եկեղեցիներն ալ պիտի բացուին Պատրիարքներէն պատասխանները հասնելուն:

Տիարպէքի 11 հոկտեմբեր

Քրիստոնեաները իրենց հեռագրին ո՛ր և է պատասխան ընդունած չ'ըլլալով, յուզումը կը վերսկսի: Եթէ Պատրիարքներէն հեռագիր մը գար որ հաստատէր թէ բողոքը տեղը հասած է, յուզումը շատ զիրաւ պիտի հանդարտէր:

Կացութիւնը կրնայ այնքան ծանրանալ որ կը համարձակիմ Ձեր Վսեմութենէն հրահանգներ խնդրել պատահարներու պարագային համար:

տահարներու պարագային համար:

\* \* \*

Պ. Քամպոն հետեւեալ պատասխանը կը դրկէ Տիարպէքի Դեր-Հիւպատոսին:

Բերա 12 հոկտեմբեր 1895

Ձեր Վալիին յարուցած բոլոր զէպքերը Բ. Դրան տեղեկացուցի: Պատրիարքներուն զարնուած հեռագիրները վար դրուած էին. այսօր պիտի յանձնուին իրենց տեղւանքը:

Ուրեմն հանդարտեցուցէք ձեր շուրջը տիրող զրգումը: Մասնաւորապէս Հայոց հասցուցէք թէ ո՛ր և է յուզում արգելք է բարենորոգումներու վերաբերեալ բանակցութեանց: Երանր պատահարներու պարագային պէտք է Վալիէն պահանջէք մեր պաշտպանած հաստատութեանց և մեր Հիւպատոսարանին պահպանութիւնը:

\* \* \*

Դեր-Հիւպատոսը Տիարպէքիէն հետզհետէ դեպքանին կը հեռագրէ ամէն օրուան կացութիւնը:

17 հոկտեմբեր

Հակառակութիւնը վերջացած կրնայ նկատուիլ: Պատրիարքներուն պատասխանները հասան, ու եկեղեցիները անմիջապէս բացուեցան: Սակայն յուզում մը կը տեսնուի միւսիւմաններուն մէջ որոնք շատ զէնք ու ռազմաւթերը կը գնեն:

31 հոկտեմբեր, ժամ 9 առտուան

Միւսիւմանները բարենորոգումներու դէմ սուլթանին բողոքի հեռագիր մը զարկին, եւ օրինակն ալ Վալիին յանձնեցին, կ'ըսուի թէ որոշեր են որ եթէ պատասխանը գոհացուցիչ չ'ըլլայ, իրենց վրէժինդութեան ծրագիրը պիտի գործադրեն անմիջապէս, այսինքն՝ վաղը, ուրբաթ: Քրիստոնեաները ծայրայեղ երկիւղի մէջ են. երէկ շուկան կանուխ գոցեցին. այսօր բանալու կը վախնան: Համոզուած են որ Կառավարութեան կողմէ կորովի եւ անմիջական գործողութիւն մը կրնայ միայն զիրենք փրկել:

Հակառակ ասոր Վալիին երէկ ինձի ապահովեց թէ, միւսիւմաններուն կողմէն բան մը չ'վախնար, եւ եթէ Բերքիստոնեաները հանդարտ մնան, ինք կրնայ ամբողջ վրլայէթին մէջ կարգ կանոն չ'խռովելուն պատասխանատու ըլլալ:

Կացութիւնը շատ ծանր է:

2 նոյեմբեր. առտուան ժամը 4.30ին.

(Պոլիս հասած առտուան ժամ 8.30ին.

Քաղաքը կրակի եւ արիւնի մէջ է:

\* \* \*

Պ. Քամպոն այս հեռագիրը ստանալուն պէս, ժամը 9. 15ին հրահանգներ կը ղրկէ Տիարպէքիր, Հիւպատոսարանը եւ կաթողիկ հաստատութիւնը պաշտպանելու համար: Ու անմիջական պատասխան կուզէ թէ առաջին գրգռումը որոնցմէ՞ ծագած է. ու թէ Հայերը միայն վրտանգի ներքե կն:

Նոյն օրը կէս օրին Պ. Քամպոն Դեր-Հիւպատոսին հետեւեալ հեռագիրը կը զարնէ.

Բերա, Չ նոյեմբեր, կէս օր

Մեծ-Վեզիրը կը պնդէ թէ ընդհարումը ծագած է Հայոց կողմէն մզկիթներուն վրայ եղած յարձակումէ մը: Ստոյգ է:

Դեր-Հիւպատոսը, անմիջապէս կը պատասխանէ հետեւեալը.

«Շատ օրէ ի վեր միսիւլմանները այս կոտորածը կը պատրաստէին, եւ զայն գործադրեցին իրենց կատարեալ հաճութեամբը եւ առանց գրգռումի: Հայոց կողմէն մըզկիթին վրայ արշաւանք մը պարզապէս հնարք մըն է: Կոտորածը ամբողջ օրը տեւեց ու վերջանալու մօտ չ'երեւիր:

Նոյեմբեր 3ին իրիկունը Դեր-Հիւպատոսը կը հեռագրէ.

«Իմ տունէն կը տեսնեմ որ զօրքերը, զապթիկները, եւ բազմաթիւ քրիստոնէից վրայ հրացան կը պարպեն:»

Կոտորածը երեք օր երեք գիշեր կը շարունակուի, եւ հիւպատոսին հաշուովը 5,000 հոգի շարդուած են:



Ֆրանսայի Կ. Պոլսոյ անսպանը նոյեմբեր 4ին խիստ բողոքագիր մը տալով արտաքին գործոց նախարար Սախտ փաշայի, բացարձակօրէն կ'աւժատանէ Էնիզ փաշան, իբր կոտորածներուն կազմակերպիչը եւ պատասխանատուն: Կը պատմէ կոտորածին նախապատրաստութիւնները, եւ կ'ըսէ որ «թէ եւ այս խորհուրդները հրապարակաւ ծանուցուած էին, բայց Էնիզ փաշա անոնց ո' կ է կարեւորութիւն չընծայել ձեւացուց, եւ քրիստոնեաները աւելի աղէկ քնացնելու համար, Ֆրանսայի Դեր-Հիւպատոսին կ'ապահովէր որ ինք պատասխանատու է միսիւլմաններուն կողմէն հանդարտութեան պահպանումին:

«Դժբաղդաբար դէպքը ցոյց տուաւ, կ'ըսէ Պ. Քամպոն, թէ շատ ճիշտ էին Ֆրանսական կառավարութեան գործակալին կողմէն վալիին հաղորդուած տեղեկութիւնները: Անժխտելի կերպով ապացուցուած է թէ որքան սուտ է Բ. Դրան այն պնդումը որով Հայոց կը վերագրէ գրգռիչի դերը: Բազմաթիւ պարագաներու մէջ արդէն Բ. Դուռը Դեսպանատանս ղիտողութեանց պատասխանած է թէ Վալիներէն առնուած տեղեկութիւններուն համեմատ հայերն են որ գրաւեր են մզկիթները եւ միսիւլ-

մաններուն վրայ յարձակեր են զէն ի ձեռին: Թէեւ Բ. Դուռը ամենէն աւելի ինք աղէկ գիտէ թէ այս առարկութիւնը որքան ստախօսական է, Դեսպանատունս բացարձակապէս կը բողոքէ ընդդէմ ամբաստանութեան մը որ կը նկրտի պատասխանատուութենէ ճողոպրել բուն իսկ հեղինակներն արինահեղ դէպքերու որոնց թատերաբեմն եղաւ, ուրիշ այնքան քաղաքներէ ետքը, նաև Տիարպէքիր ալ:

«Չոր մսեմութիւնը արդէն դիտէ թէ ինչպէս շրջականերու քիրտ հրոսախումբերը քաղաք մտեր են, եւ իսլամ ժողովրդին աջակցութեամբը, ամէն կողմէն քրիստոնեաները ջարդեր են, եւ շուկան աւարի տալով այրեր են:

«Կոտորածը տեւած է ամբողջ ուրբաթ, շաբաթ, կիրակի օրերը: Ֆրանսայի Դեր-Հիւպատոսը, թէեւ կուսակալին ազդարարութիւններ տուած է, բայց եւ այնպէս հազիւ թէ կարող եղած է զապթիկներու պահակ մը ունենալ Հիւպատոսարանին եւ Քարուչին հայրերու հաստատութեանը համար: Աւելի քան 500 քրիստոնեայ, մարդասպաններէն հալածուելով, ապաստաներ են հիւպատոսարանը, և ազատեր են ստոյգ մահէ մը:

«Քիրտերու նորանոր խումբեր կը տեսնուին քաղքին մօտերը, եւ իշխանութիւնը ոչ միայն ո' կ է միջոց ձեռք չ'առնէր, այլ եւ իսլամական կրքերը կը քաջալերէ:

«Իշխանութիւնը ոչ միայն չգոհանար միսիւլմաններուն մոլեռանդութիւնը եւ խորհուրդները կերպով մը քաջալերելէ, ձեռնպահ մնալով առաջուց ձեռք առնելու Դեր-Հիւպատոսին պահանջած միջոցները, այլ եւ թող կուտայ որ զինուորները եւ զապթիկները երթան խառնուին մարդասպաններուն եւ աւարառուներուն: Մեր զօրժակալը, Պ. Մերիէ, երկու օրէ ի վեր իր պատուհաններէն տեսած է որ զինուորական զօրութիւնը միացած է ամենավատ խառնաճաղանճին և քրիստոնէից վրայ յարձակած:»



Տիարպէքիրի Ֆրանսական Դեր-Հիւպատոս Պ. Մերիէ, 1895 դեկտեմբեր 18 թուականով ընդարձակ տեղեկագիր մը զրած է Պոլիս Ֆրանսական դեսպանատան, մանրամասնօրէն նկարագրելով նոյեմբեր 1, 2, 3ի կոտորածները: Այդ գրութեան սկիզբը ահա ինչ կը խօսի Էնիզ փաշայի մասին:

«Մերտինի միաքեսարեֆը, Էնիզ փաշա, որ 1894 հոկտեմբերին Տիարպէքիրի առժամեայ վալի կարգուեցաւ, ի բացակայութեան Սուրի-փաշային, այս քաղքին մէջ հանրածանօթ էր իր մոլեռանդութեանը և քրիստոնէից դէմ ունեցած ատելութեանը պատճառաւ: Իր նոր պաշտօնին կիրառութեանը մէջ իր բոլոր գործերը կը ծառայէին այս համարը հաստատելու և քրիստոնէից հաւատեցու վալիին կողմնակալութիւնը: Կը յիշուի Տիարպէ-

քրի կացութիւնը անցեալ մարտին, շէյն Չիւանը այս քաղքէն անցած պահան, եւ բոլոր այն ջանքերը զոր այդ միջոցին պէտք է ի գործ դնել աղէտի մը առջեւը առնելու համար: Ուստի եւ երբ հոկտեմբեր 4ին Էնիզ փաշային Տիարպէքիի կուսակալութեան անուանումին լուրը քաղաքը տարածուեցաւ, քրիստոնեաները թախծութեամբ համակուեցան: Կը զգային թէ առանց ո՛ր է պաշտպանութեան ա՛լ յանձնուած են այս մարզուն ձեռքը որմէն ամէն բան պէտք էր վախնային. ուստի եւ այդ վայրկեանին կառավարութեան վրայ ո՛ր է պատահութիւն կորօրնացոյցին: Սակայն Էնիզ փաշա բաւական չէր համարեր անուանում մը որ իրեն անակնուճելի պէտք է երևար, և որ ամէնուն համար անբացատրելի էր. իրեն պէտք էր նաեւ հաւանութիւնը այն ժողովրդին զոր կը ճնշէր, եւ բռնի կը ստիպէր անոր հոգեւոր պետերը և երևելիները սուլթանին հետագիր մը ընել և այս անուանումին համար շնորհակալութիւն յայտնելով, իրեն գրուատալից գովեստներ կարգաւ:»

Դեր-Հիւպատոսը ընդարձակօրէն նկարագրելով Տիարպէքիի կոտորածը որ երեք օր եւ երեք գիշեր տևած էր, ու գեղերունը որ տասնը հինգ օր շարունակած էր, «հոն տեղուանքը ֆրանսական հիւպատոս չը գտնուելուն պատճառաւ», ամէն մէկ տողին կ'ամբաստանէ Էնիզ փաշան: Կ'ըսէ թէ «Խղճիս պարտքն է հզօրապէս յայտարարել թէ՛ Տիարպէքի իսլամները ըրին կոտորածը, առանց չըգուովի. թէ՛ Ընդհանուր Կուսակալը, զինուորական հրամանատարը, հեծեալ ոստիկանութեան պետը անտարբեր հանդիսատեսներ եղան այս սոսկումի տեսարաններուն հանդէպ և բացարձակօրէն բան մը չըրին անոնց առջևը առնելու համար. ու թէև ուղղակի չմասնակցեցան, բայց իրենց բռնած դիրքը քաջալերական էր. աչքովս տեսնոյ որ զինուորները ու զապթիէները իսլամներուն եւ քրիստոնեան միացան քրիստոնէից վրայ կրակ ընելու համար, և թէ առոնք իրենց զէնքերը ինքնապաշտպանութեան համար գործածեցին միայն, երբ բացարձակօրէն հարկադրուեցան:»

Կստորածէն ու թալանէն ետքը Էնիզ փաշա առաջուրնէ աւելի խստութեամբ վարուած է Հայոց հետ: Չանոնք բանտարկել տուած է, իբր ժողովրդին ոտք ելլելուն պատճառ, եւ տանջեր է մինչեւ որ մեռնին. ուզած է որ այս տանջանքներուն ներքեւ հայերը զիրար մատնեն, եւ ամբաստանութեան նիւթ հայթայթեն կառավարութեան: Կուսակալը ուզեր է որ Հայոց առաջնորդը թուղթ մը ըստորագրէ իրենները յանցաւոր ճանչնալով, ու երբ առաջնորդը սերմեր է այս հրամանին հնազանդիլ, Էնիզ փաշան ալ ջնջեր է այն փոքր նպաստը որ հացի համար կը տրուէր, ապրուստի ո՛ր է միջոցը զրկուած մը նացող Հայոց:»

Շարունակ քառասուն եւ վեց օր Տիարպէքիի ժողովուրդը սարսափի մէջ կը մնայ, մինչեւ որ հոն կը հասնի քօմիսիօն մը որուն անդամ են Չիա եւ Ապտու-

լահ փաշաները: Այս մէկուկէս ամսուան միջոցին Էնիզ փաշա ամէն ջանք ի գործ կը դնէ յանցաւորները պաշտպանելու և անմեղները պատժելու համար. իսլամները վստահ ըլլալով թէ անպատիժ պիտի մնան, նորանոր ոճիրներ կը գործեն ցորեկ ատեն խկ:

Պ. Քամպոն 1896 յունուար 5ին Տիարպէքի կը հեռագրէ թէ Սրտաքին գործերու նախարարը իրեն իմացուցած է որ Էնիզ փաշայի պաշտօնանկութիւնը ուրոշուեր է:

Եւ սակայն Տիարպէքի ահոյի վիճակի մէջ է: Պ. Մերիէ 1896 յունուար 8 թուականով կը գրէ Կ. Պոլսոյ գեսպանին թէ «Ղրկուած երէք քօմիսիօններուն բարի դիտաւորութեանցը հակառակ, կացութիւնը միշտ սպառնական է: Միսիլմանները զինաթափ չեն ըլլար: Կառավարութիւնը, բոլոր պաշտօնեաները, բայց մասնաւորապէս վալին կը քաջալերեն անոնց մեքենայութիւնները: Վալին արդարութեան չափն ու կշիռը կորսնցուցած կը թուի:» Ու Դեր-Հիւպատոսը այս ամէնը տեսնելով կ'ըսէ «Չեմ վախնար կրկնել թէ՛ եթէ Էնիզ փաշան երկրին մէջ մնայ, ուշ կամ կանուխ նորանոր աղէտներ պիտի ողբանք:»

Պ. Քամպոն կը զիմէ սուլթանին, որ Դրան կը հրամայէ Քօմիսիօնին Տիարպէքի մնալը մինչեւ Էնիզ փաշային անկէ հեռացուի:

Պ. Քամպոնի զիմուք տեղի կունենար 1896 յունուար 26ին, բայց ամիս մը ետքը, փետրուար 25ին, Դեր-Հիւպատոսը կը հաղորդէ թէ «Քաղաքը երէկ նորէն սարսափի մը ենթակայ եղաւ: Ա՛լ չորս ամիս է ի վեր է որ այս սարսափները պարբերական եղած են:» Պ. Մերիէ այդ կացութեան պատճառները պարզելով, անոնց պատասխանատուն միշտ կուսակալ Էնիզ փաշան կը նշկատէ:

Վերջապէս Ֆրանսայի դեսպանատան պնդումին վերայ Նախ արարներու ժողովը 1896 փետրուար 26ին կ'որոշէ Էնիզ փաշայի պաշտօնանկութիւնը առաջարկել սուլթանին. բայց ահա չորս ամիս վերջը դեռ Էնիզ փաշա իր պաշտօնը կը շարունակէ, և Պ. Մերիէ յունիս 20ին Պոլիս կը հեռագրէ թէ «Կացութիւնը նորէն շատ ծանրացաւ: Երէկ սարսափը մեծ էր: Չէնքի և ռազմավթերքի անսովոր առևտուր մը կը դիտուի: Մեր կրօնաւորները եւ ֆրանսացի ֆոյրերը կը պնդեն որ ձեզի ըսեմ որ շատ անհանգիստ են իրենց վերապահուած վիճակին համար. եթէ լուրջ եւ արմատական միջոցներ ձեռք չառնուին, քիչ ատենէն մեծամեծ աղէտներ պիտի ողբանք ապահովաբար:»

Այս տեղեկութեան վրայ Պ. Քամպոն Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին կը հեռագրէ թէ «Պ. Մերիէի հեռագիրները Տիարպէքիի կացութիւնը շատ սրտաւճալիկ գոյնով կը նկարագրեն. մեր գործակալը շատ ամիսներէ ի վեր կը մարտնչի, եւ տեսնելով իր ջանքերուն անօգտակարութիւնը, ա՛լ կը սկսի վհատիլ: Քաղքին

բոլոր իշխանութեանց մէջէն զինուորական հրամանատար Ջիա փաշան միայն կը զիմացրէ նորանոր կոտորածներու որոնք գրեթէ ակնբեր կերպով կը պատրաստուին: Միւսիւմանները զէնք եւ վառօղ կը գնեն և քրիստոնէից մահուան սպանալիք կ'ընեն. ամէն օր քրիստոնեայ ժողովուրդը ֆիւրտերուն ժամանումը կը վախնայ: Կուսակալ Էնիզ փաշայի պատասխանատուութիւնը ա'լ շատոնց ի վեր հաստատուած է. քանիցս ինծի խոստացուեցաւ անոր պաշտօնանկութիւնը, բայց Պալատի ազդեցութիւնները զոր շահած է կը յաջողին իր ետ կանչուիլը յետաձգել: Էնիզ փաշայի պաշտօնավարութիւնը վտանգ մըն է քրիստոնէից համար, մեր առաքելութեանցը համար, նոյն իսկ մեր գործակատարին համար:»

Պ. Քամպոն արդէն 1896 յունիս 22 թուակիր բողոքագրով մը դարձեալ Էնիզ փաշային պաշտօնանկութիւնը պահանջած է, եւ յունիս 23ին Տիարպէքեր Դեր-Հիւպատօսին կը հեռագրէ թէ՛ նախընթաց օրը նոր զիմում մը ևս ըրած էր Վալիին հեռացմանը համար, ուստի եւ «մեր կրօնաւորները եւ կրօնաւորուհիները ապահովեցէք» կ'ըսէր: Բայց այս ապահովութիւնը տալէն չորս օր ետքը, Պ. Քամպոն կը պարտաւորուի դարձեալ բողոք բանալ Արտաքին գործերու նախարարին, յենով Տիարպէքերէն ստացած նորանոր տեղեկութեանցը վրայ:

Ու ամիսներ կ'անցնին, ձայն ձուն չ'ըլլեր Դոնէն. Էնիզ փաշա կը շարունակէ ահաբեկել Տիարպէքերը, արհամարհելով Քրանսական հիւպատոսն ալ, դեսպանն ալ ամէնքն ալ:

Սուլթանը այդ սճրագործը Տիարպէքերէն հեռացուց Պոլսոյ մեծ կոտորածէն երեք ամիս ետքը, 1896 նոյեմբերին, երբ Ֆրանսայի բարեացակամութեանը պէտք ունէր:

Ահա մարդը որ հիմակ իբր կուսակալ կը զրկուի Կիլիկիա, ուր Ֆրանսա շատ մը շահեր ու նկատուիւններ ունի:

Կիլիկիոյ քրիստոնէից համար աղէտաւոր օրերու գուժկան մը, Եւրոպայի եւ յատկապէս Ֆրանսայի համար նախատինք մըն է Էնիզին Հալէպի կուսակալութեան կոչուիլը:

\* \* \*

Երբ այս տողերը կը վերջացնենք, յուլիս 25, Թայրզ կը ծանուցանէ թէ Հալէպի նոր Վալիին Պոլիս գանգատ հեռագրեր է թէ, հիւպատոսները իրեն բարի գալուստի այցելութեան չեն եկած: Նախարարներու խորհուրդն ալ Էնիզի ետ կանչուիլը պիտի առաջարկէ սուլթանին:

Տեսնենք Եւրոպայի համաձայնութիւնը ինչ ազդեցութիւն պիտի ունենայ:

ՍՈՌԻՍ ՊԱՌԷՍ ԵՒ ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

Ահա այս երրորդ կամ չորրորդ անգամն է որ Մոռիս Պառլս Քրանսական մամուլին մէջ կը դառնայ իր ու մեր ողբացեալ բարեկամին՝ Տիգրան Երկաթի՝ մահուանը վերայ խօսելու: Եղբայրական սրտառուչ աղապատանքի այս հարկը զոր Ֆրանսացի մեծ գրագէտը ամէն առթիւ կը մատուցանէ իր բարեկամին յիշատակին, նախարարական ծաղիկներու զետեղման պէս է անոր հետաւոր գերեզմանին վրայ:

Վերջերս Յունաստան ճամբորդութեան մը առթիւ է որ Մոռիս Պառլս նորէն կը յիշէ Տիգրան Երկաթը (Կարապետ Պիլգրիկեան) հին Աթէնքի զերեզմանաքարերուն մէջ պտտած ատեն. — գերեզմանաքարեր որոնց մասին Տիգրան Երկաթ իր թերևս ամէնէն գեղեցիկ յօդուածը գրեց Ռեվիշ տէ Ռեվիշի մէջ:

«Ինչո՞ւ համար այնքան յաճախ գացի մեռելներու ճերմակ կոթողներուն մօտ, Բագիսիայի միւզէն կամ Սէրամիքի ասփոզեցներուն մէջէն ման գալու: Կրնայի ուղղակի հաճոյք մը զգալ անոնցմէ մէկ քանի վայրկեան. բայց իմ երկար այցելութիւններուս միջոցին, կը յիշէի թէ իմ ամէնէն սիրական բարեկամս՝ երիտասարդ Կարապետ պէյի վրայ՝ ինչ ներգործութիւն ունեցան հին Աթէնքի այդ մեռելական յիշատակարանները, ուր մեռելը կը տեսնենք որ՝ իր գերեզմանին առջևն ստած՝ հրաժեշտ կ'առնէ իր բարեկամներէն, առանց բնաւ անձկութիւն մը կամ սրտաբեկութիւն մը ցոյց տալու կարծես, նման պտուղին որ իր բունէն կը զատուի, կամ արեւին երբ իր մարը կը մտնէ:

«Այդ երիտասարդ Արևելցին, Կարապետ, ամէնէն հազուագիւտ էակը որուն հանդիպած եմ կեանքիս մէջ եւ որ ամէն բանէ բանաստեղծութիւն կը քաղէր, մէկ քանի տարի ուսումնասիրած էր իսլամական ամէնէն ծանրախոհ կրօնագէտներուն մօտ: Աթէնքի պղպեղենիներուն տակ, Արևմուտքի գիտութիւնը, արուեստը, իմաստասիրութիւնը եւ բարքերը գտաւ: Ինչ եռանդով սիրեց արժանապատուութեան այն մեծ գպրոցը որ հեղինակութիւնն է Կ. Պոլսոյ գերեզմանոցներուն մէջ, այդ փաթթոցով մը պսակուած անհամար քարերով լեցուն թփաստաններուն մէջ, չէր կրնար անձնատուր ըլլալ հաճոյական երգանքներու, ինչպէս պիտի ընէինք մենք՝ անտարբեր ուղեւորներս: Ինք կ'ատէր գանոնք, ու կ'ըսէր. «Դէմք չկայ, արձան չկայ: Թիւրք ուղեղը ամբողջովին գերին է վարդապետութեան մը ուր կրօնքը եւ կառավարութիւնը իրարու կը խառնուին: Իր մանուկ հասակէն, «հաւատացեալը» կը պնդէ, կը խելամոտի, կը հնազանդի: Երբեք իր միտքը չի գար այն գաղափարը թէ անհատի արժէք մը ունի ինք: Իր արարչին անհունութեան առջեւ, փոշի է որ փոշի կը դառնայ:

զինքը կերակրող Սուլթանին ամենագորութեան առջեւ, պաշտօնեայ մըն է զոր կը ճամբեն եւ տեղը ուրիշ մը կը դնեն: Իր բանականութիւնը գերի է բարսոյապէս, ինչպէս իր մարմինը գերի է քաղաքականապէս, եւ փաթթոցը որով իր ածիւրած ճակատը կը զօտեորէ հպարտօրէն՝ դարեւոր նոճիներուն տակ կ'երևնայ իբր ստրկութեան վերջին խորհրդանշանը:»

Տիգրան Երկաթ, կ'ըսէ Պառէս, Աթէնքի այդ գերեզմանաքարերուն մէջ մահուան հանգէպ բարձր անզգաճութեան դաս մը կը գտնէր: Այդ մարմարիոնները կը սըրտապնդէին զինքը: «Իր երևակայութիւնը, զոր իր ցեղին հագարաւոր այրերու, կիներու եւ տղաքներու բազմաշարշար մահը կը յաճախէր, կը սիրէր ահոյի ճակատագրին զէ՛մ գրահաւորութիւնը՝ խորհելով այդ անհասկանալի մահերուն արժանապատուութեանը, գերապանձ անդորրութեանը:»

«Այդ կոթողներուն վրայ, մերթ ծերունի մըն է եւ իր աղջիկը. աղջիկը սրտաուշ գեղեցկութիւն մը եւ արտայայտութիւն մը ունի. հրեշտակային ազնուականութիւն մը: Ինչ կ'ըսէ հայրը. իր ցաւը յայտնի կ'երևայ: Բայց աղջիկը. սրչափ հանգարտ է. չի՛ գիտեր արդեօք թէ ինչ է մահը: Միտքս կուգայ այն սոսկայի աղաղակը, զոր ինձի կը յիշէր Ալֆօնս Տօտէ, Հիւսիսի հիւանդ աղջկան մը որուն մօտ կը հսկեն իրենները եւ որ գիշերին մէջ կը բացագանչէ. «Հայր, այնչափ գժուարս կուգայ կոր մեռնելը:» Ատ խօսքը մեզ հեղձամղձուկ կ'ընէ անձկութեամբ. եւ սակայն այդ մանկամարդ անհասկանալի իրեններէն կը բաժնուի առանց սրտաբեկութեան: Այն բոլոր առաքինութիւնները որոնք բովանդակուած են «արժանապատուութիւն» բառին մէջ, մէկտեղած են այդ կոյսերուն վրայ: — Միւզէն, մեռելական անօթի մը վրայ, կը տեսնենք երկու երիտասարդ սաղաւարտով, նիզակով եւ վահանով զինուած, որոնք իրարմէ հրածեղտ կ'առնեն, մնաց—բարով կ'ըսեն իրարու: Երկու մանկամարդ կին, որոնց մին՝ կանգուն՝ թեթևակի կը կրթնի իր նստած ընկերուհիին վերայ, հեռուն կը նային: Երկու որբայրիներն են: Աջ ձեռքով, երկուքն ալ ետ կը կանչեն կամ ցոյց կուտան երկու անզգած հերոսները: Բայց անոնք, կեանքէն բաժնուելու մօտ, ուրիշ բանի չեն մտածեր բայց եթէ իրենց փառքին, կը մոռնան հաճոյքներն ու գորովը: — Մեռելական ուրիշ մարմատի մը վրայ, մեռնողը, երիտասարդ մը որ ձեռքը գաւազան մը ունի եւ որուն հետ շուն մը կայ, մրտախօհ ակնարկ մը կը խորասուզէ հեռուն: Բան մը ցոյց չի տար թէ կ'ափսոսայ կեանքը. չի գիտեր թէ ինչ կը կորսընցնէ. ուժերուն տկարացած ատենն է որ մարդ կեանքին կը կապուի: Երսուն տարեկանին, մարդս նոր բան կը փնտռէ, միշտ նոր, եւ հերոս ըլլալն ալ նոր բան մըն է: Երեսունի մը խորին ցաւով կը դիտէ զանի: Հայր մըն է, բայց պիտի չի լայ, որովհետեւ մարդ մըն է: Յոյները սակայն գիտէին արցունքը, քանի որ պզտիկ սպասաւոր մը գետնը կ'ծկտած է, կուլայ: Բայց ատ լացողը տղայ մըն է եւ գերի մը:

«Այդ բոլոր մեռելները մեզի կ'ըսեն. «Չսպեցէք արցունքնիդ եւ մի՛ դառնացնէք ցաւերնիդ, ամէն բան լըմնցած է:»

«Կ. Պոլսէն մեկնելուն, Կարապետ պէյ, անհասկանալի վարդապետութեան մէջ թրծուելով, ընդունեց ինչ որ իրեն կրնար բերել իր ցեղին ճակատագիրը, որուն սերտիւ փառած էր: Այդ զիրարակ հերոսին համար, որ կեանքը կը տեսնէր արեան անձրևի մը մէջէ եւ որ ինքզինքը իբր նահատակ կ'ընծայէր իր ազգին եւ փառքին, թէսէոսի առ Անտիգոնէ եւ իսմէն ուղղած խօսքը կենդանի էր միշտ. «Մանկամարդ աղջիկներ, զաղբեցուցէք արցունքնիդ. պէտք չէ լալ անոնց վրայ որոնց մահը հանրութեան օգուտ մը բերած է. ասիկա թշնամանել է աստուածներու:» Կարապետ պէյ կը յուսար իր ազգին պատմութեան մէջ մնալ, այդ հերոսացած երիտասարդ մեռելներուն պէս: Ու, 1899 ղեկտեմբերին մեռաւ, քսանընդ տարեկան, իշխանաց մէկ կղզին, Մարմարայի ծովուն վրայ, ամէնէն զժնէ հիւանդութեան մը երկար տառապանքներէն սպառած, ու առանց իր մահովը օգուտ մը բերելու հանրութեան:»

### ՕՐՍԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

Նախորդ յօդուածով պատմեցի թէ մինչեւ 1887 սեպտեմբեր ամիսը կ. Պոլսոյ հայ մամուլը կանխարգել զըրաքնութեան չէր ենթարկուած: Ազարեան պատրիարքին եւ Արևելքի միջեւ ծագած անհամաձայնութեան մը առթիւ տպագրական տեսչութիւնը ուշադրութիւն դարձուց հայ թերթերուն վրայ ալ: Նաև տարակոյս չի կայ թէ այդ թուականին թիւրք մտքերը սկսած էին խռովիլ հայկական խնդրին նորանոր երևոյթներէն: Հայաստան քաղաքական ձեռքադրութիւնները կը շատնային, ու հայ երիտասարդներ Պսլիս բերուելով Ղարաթարապուլուս կ'աքսորուէին: Եւրոպա յեղափոխական հայ թերթեր եւրեան կուգային, ու անգլիական մամուլը մեզմով կը զրազէր: Օր մըն ալ տպագրական տեսչութեան կողմէն երիտասարդ պաշտօնեայ մը Արևելքի խմբագրատունը ներկայանալով ուզեց գաւառական թղթակցութեանց ձեռագիրները աչքէ անցընել հրատարակուելէ առաջ: Յաջորդ օրուան թիւին համար նամակ մը կար, իրեն տրուեցաւ, կարգաց եւ աննշան քանի մը բառ ջնջելով վերադարձուց: Ու ալ ամէն օր կուգար, բերանացի հրահանգներ կը բերէր, ընդհանրապէս քաղաքական խնդիրներու վերաբերեալ, եւ ուշադրութիւն կը դարձնէր գաւառական թղթակցութեանց, զոր մենք արդէն սրբազրած ըլլալով զրաքընդիւն փոփոխութեան մեծ բան մը չէր կրնար գտնել: Ա-

միսներ վերջը սակայն խնդրեց որ « Հայաստան » անունը չափազանցօրէն չգործածենք: Եւ իրաւ ալ « Հայաստանի կեանքը », « Հայաստանէն թղթակցութիւններ », « Հին Հայաստան », Նոր Հայաստան » կը վիտային Արեւելքի սինակներուն մէջ: Չեղչումի պէտքը անխուսափելի էր, և համակերպեցանք անխուսափելի հարկին: Կամաց կամաց ստիպուեցանք որքան կարելի է թիչ երեցնել « Հայաստան անունը, միշտ գրաքննութեան խնդրանքին վրայ: Օր մըն ալ ըսաւ թէ « ատեն մը բնաւ մի՛ գործածէք « Հայաստան » բառը, մինչեւ որ սա օրերը անցնին: » Չեմ գիտեր ինչ օրեր էին, միայն թէ ամէն ատեն երբ օրագրութեան մէջ, ազգային խնդիրներու մէջ համակերպութեան մը պէտքը ցոյց տրուած է, կամ զոհողութիւն մը խնդրուած է, միշտ առժամութեան պայմանաւ է. « Ճանըմ, մէջ մը սա օրերը անցնին: » Եւ ժօտ բնան տարի է « սա օրերը » չեն լինար. ամէն բան կ'անցնի, կը զոհուի, հայութիւնը նորանոր պահանջութեան կ'ենթարկուի, ու սա օրերը չեն անցնիր: Թրքական բռնապետութիւնը մեր ունեցած իրաւունքները և թիչ շատ տեսակ մը ազատութիւնը մէկ օրուան մէջ չիւնց չվերցուց: Կամաց կամաց կը ջնջէ, մէկիկ մէկիկ կ'անհետացնէ ինչ որ անշատ ազգայնութեան մը տարբերքները կը կազմեն հպատակ ժողովրդի մը համար: Կովկաս ալ ուսական բռնապետութիւնը հայ գպրոցները մէկ անգամէն եւ մէկ օրուան մէջ չը ջնջեց. բանդուքը աստիճանաբար կը յառաջացնէ:

Գրաքննութեան լուծը անզգալարար գետեղուելով մասնաւոր վրայ շատ ծանր չերևցաւ: Գրական, պատմական, բանասիրական, գիտական յօդուածները անարգել կ'անցնէին. ազգային բոլոր խնդիրներուն մէջ անկաշկանդ կարելի էր գրել. պատրիարք, ժողովականներ, նոյն իսկ պետական անձնաւորութիւնները՝ որպիսիք էին Նուրեան և Մագսուտ, ազատօրէն կը քննադատէինք: Մակայն այս ազատութենէն օգտուելու առիթը յաճախադէպ չէր: Ճերիտէի Եարգիթ թրքաբարբառ հայ օրաթերթը իր շուքէն վախցող էր, և միշտ հարուստ, էֆէնտի, վաճառական դասակարգերուն հաճելի երեւնալ կը միտէր: Արևելքի վարչութեան անդամներէն ումանք ազնուապետական հովեր աննելու տենչացող, կը ջանային թերթը օրէ օր աւելի մզլոտած պահպանողականութեան խնդրուկ մըթնորոտին մէջ ապրեցնել: Արեւելքը, միակ հայերէն օրաթերթը, երկու անշատ ուղղութեան կը հետևէր: Առաջին երեսը իրեն զէմ ունէր երրորդը: Վարչութիւնը կ'ուղղէր առաջին երեսը, իսկ երրորդը, իբր գրական բաժին իմ ազգեցութեանս ներքև կը մնար: Այդ երրորդ էջին մէջ սկսած էին ժամադիր ըլլալ նոր գրողները, առաջնորդութեամբ Բաշալեանին որ բոլոր նորածիլ ուժերը իրեն քաշելու և զեկավարելու զօրութիւնը ունէր, թէև ինքը հազիւ տասնըինը տարեկան էր:

Որքան որ ալ առաջին եւ երրորդ երեսները իրարմէ

բաժնուած էին, բայց եւ այնպէս երկուքն ալ միեւնոյն թերթին պատկանելով, ու միեւնոյն վարչութեան հսկողութեան ներքև գտնուելով, բնականաբար վէճերը վարչական խորհրդին մէջ անպակաս էին: Գրեթէ ամէն օր ընդհարումներ տեղի կ'ունենային: Երբ անհամաձայնութիւնը կը սաստկանար, այն ատեն, որպէս զի խզում տեղի չունենայ, ինձի կը թողուին Մասիսը, զոր խմբագրելու եւ հրատարակելու իրաւունքը Արևելքի վարչութիւնը ստացած էր այն ատեն: Բաշալեան, ես եւ բոլոր ուսուցիչներուս գրողները հոն կը շուէինք: Ես կը պահէի Արևելքի մէջ իմ ժողովականի իրաւունքս միայն, սրմէն կ'օտուէի զխաւորապէս ուսուսչայոց վերաբերեալ խնդիրներու մասին: Բոլոր ազգեցութիւնս ի գործ գնելով երբեք չեմ թողարարած Մշակի եւ Մշակակաճներու ո՛ր և է անպատ հրատարակութիւն մը, ինչպէս անոնց հակառակորդներուն համար ալ ո՛ր և է նպատատուր բան մը, յատարարութիւն մը անցած չէ Արևելքի մէջ: Սակայն արտաքին ճնշումին ներքև Արևելքի պաշտօնակիցներս կը զղջային կատարուած փոխանակութեանը համար: Մասիսը ձեռքերնուս կը խլէին, յուսալով որ Արևելքի մէջ կրնային գտնուի աստիճան մը հս ել վրանիս. բայց շուտով յուսախաբութեան կը մատնուէին, եւ մենք նորէն կը շուէինք ի Մասիս, ուրկէ շուտով կը վերադառնայինք Արևելք, անմիջապէս նորէն Մասիսի մէջ գետեղուելու համար: Այս անընդհատ երթեկուցութիւնները շարունակուեցան մինչև 1890ի վերջին ամիսները, երբ մեր գրական խումբը առժամապէս ցրուեցաւ, իմ բանտարկութեամբս եւ Բաշալեանի տարագրութեամբը: Արդ՝ մեր բոլոր անհամաձայնութիւնները ազգային խնդիրներու շուրջը կը գտնուային, առանց ո՛ր և է անձնական կուռի. գրաքննութիւնը ո՛ր և է կերպով չմիջամտեց մեր ազգային ուղղութեան, նոյնիսկ երբ ամենածանր յօդուածներ կը հրատարակէի Յարութիւն պատրիարքի, Բարթողիմէոս եպիսկոպոսի, Նուրեանի, Մագսուտ Սիմոն պէյի զէմ:

Գրաքննութեան հաստատուելէն քանի մը ամիս յետոյ գիտեցինք թէ Դուռը ինչպէս Հայաստան անունին կը հակառակի, նմանապէս հետզհետէ իր ուշադրութիւնը մեր հին պատմական կեանքին վրայ կը դարձնէ: Հայրենիքն ու պատմութիւնը, ներկան ու անցեալը հայուն հաւասարապէս մոռցնել տալու քաղաքականութիւնը ուրուագծուած էր: Օրագրութեան էջերուն մէջ շատ առիթ չէինք ունենար հին պատմութեան վրայ խօսելու, բայց ամէն անգամ որ պատեհութիւնը կը ներկայանար գրաքննիչն ալ կը շուարէր: Իզմիրեանց մրցանակաբաշխութեան 1888ի հանդէսը փորձաքար մը եղաւ: Մրցանակի ներկայացուած նիւթերը ամէնքն ալ ազգային պատմութեան կը վերաբերէին: Արևելքի մէջ ընդարձակօրէն տեղեկութիւն կը տրուէր ամէն մէկ նիւթին վրայ: Արշակ Բ եւ Պապ թագաւորներուն վրայ երկար բարակ ուսումնասիրութիւն մը ներկայացուած էր. մենք ալ զայն համառօտած էինք: Դր-

րաքննիչը կուզէր ամբողջապէս ջնջել, ինչ որ թերթին հրատարակութիւնը յետաձգելու պատճառ պիտի ըլլար: Ջանացինք գրաքննիչը համոզել թէ ինքնին անվստահութիւնն է. վերջապէս համաձայնեցանք որ հայ թագաւորնեւրուն անունները առանց Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ այլնի հրատարակենք: Արշակ Բը ըրինք պարզ Արշակ. «Արշակ էֆէնտի ալ կրնայ հասկցուիլ» ըսինք: Բայց երբ խնդիրը Արշակի տղուն՝ Պապին եկաւ, հանգոյցը կընձնոտեցաւ: Այդ տեսութեան հեղինակը, կարծեմ Պ. Մարկոս Աղաբէկեանցն էր, շատ անպատշաճ լեզուով կը խօսէր Ներսէս հայրապետը թունաւորող թագաւորի մասին: Ուզեցինք պարզ Պապ թողուլ, բայց ահա գրաքննիչը սկսաւ Կող ելլել:

— Հապա Աղաբեանք ինչ ընենք, ըսաւ:

— Աղաբեանք հոս ինչ գործ ունի, հարցուցի զարմացած:

— Եթէ ելլէ Դուռը գայ եւ բողոքէ թէ Պապին զէմ է աս, ի՞նչ պիտի ըսեմ:

Ահադին քրքիջէ մը յետոյ յաջողեցանք համոզել թէ Պապ թագաւորի մը եւ կաթողիկէ եկեղեցիին պետ Պապին միջեւ ո՛ր է շփոթութիւն կարելի չէ: Գրաքննիչին այս կասկածաւորութիւնը իսկ ցոյց կուտար թէ արդէն այդ թուականէն սկսեալ մասուլը պէտք էր վախճար Հայոցմէ Դուռը հազորդուելիք գաճապատներէն: Ու ինչպէս ետքէն ալ տարիներու փորձը ցոյց տուաւ, տպագրական տեսչութիւնը մեզի բաւական հանգիստ պիտի թողուր եթէ պատրիարքները, էֆէնտիները, ազգային գործերու միջամտող վաճառականները, ամէն անոնք որ մամուլէն կը քննադատուէին, վազն ի վազը Դուռը դիմելով ամբաստանութիւններ չտեղեկանէին:

Ալըզեան Խորէն պատրիարքին պաշտօնավարութեանը առաջին ամիսներուն մէջ սկսաւ սովորութիւն ըլլալ Պատրիարքարանէն մամուլին զէմ բողոքներ զրկել Դուռը: Բաշլեանին հետ 1888 հոկտեմբերին սկսանք կրկին Մասիսը շարթաթերթը հրատարակել. հազիւ թէ չորս թիւ հրապարակ հանած էինք եւ ահա անպայման զարուածի հրամանագիրը ստացանք: Նորընտիր Պատրիարքը շարունակ շնորհաւորական այցելութիւններ կ'ընդունէր առտուրնէ մինչեւ իրիկուն, և ժամանակին մնացած մասն ալ հարուստներուն այցելութիւն տալով, անոնց տունները գիշերելով կ'անցընէր: Քննադատական յօդուածով մը Մասիս յայտարարեց թէ՛ «Արեւելեան հարսնիքներն ալ քառուստն օր քառուստն գիշերէն աւելի չեն տևեր, իսկ Ալըզեան պատրիարք իր հարսնիքին քառուստնքը շատոնց անցուց, եւ սակայն խրախճանութիւնը կը շարունակուի, առանց մօտալուտ վախճանին ակնկալութեան մը: Ազգը Պատրիարք մը ընտրած է եւ անոր թոշակ կուտայ որպէս զի ազգին գործերը տեսնէ, եւ ոչ թէ այցելութիւններով զբօսնու» Այս իմաստով շատ խիստ յօդուած մը կրուած էր: Միանգամայն «մեր» ներքին բարե-

կարգութեանց» խնդրին վերաբերեալ տեսութիւններ պարզուած էին ուրիշ յօդուածով մը: Այս երկու յօդուածները Մասիսի զազարումին պատճառ եղան:

Այս զազարումէն յետոյ օրագրական հրապարակը հանդարտ կը մնար. Պատրիարքարանին կամ Դրան զըժգոհութիւն առթող ո՛ր է յօդուած չէր հրատարակուեր Արևելքի մէջ, երբ յանկարծ 1889ի յունիսին սկիզբները առտու մը թիւրք թերթերը հազորդեցին Արևելքին տասնըհինգ օրուան զազարումի գատապարտութիւնը: Միևնոյն օրը սակայն ֆրանսերէն Սքամպոնի եւ յունարէն Նէօլոդոս օրաթերթերն ալ համանման պատժի ենթարկուած էին: Դազարումի պաշտօնական հրամանագիրն ալ արդէն Արևելքի խմբագրատունը եկած էր նախորդ իրիկունը, մեր մեկնելէն յետոյ: Շարթաթ առտու մըն էր կարծեմ որ այս տնօրինութիւնը գործադրուեցաւ: Ղաթաթիա գալուս երբ եղածը իմացայ, անմիջապէս միւս երկու թերթերուն խմբագրատունները երթալով զազարումին պատճառները սկզբի իմանալ: Անոնք ալ չէին գիտեր թէ ինչո՞ւ կը պատժուին: Իրենց բոլոր հրատարակութիւնները գրաքննիչներէն վաւերացուած էին: Համաձայնեցանք որ երեք թերթերուն ներկայացուցիչները նոյն օրը Դուռը երթալով հարկ եղած դիմումները ընեն:

Վերադառնալով Արևելքի խմբագրատունը հարցուցի փնտոցի թէ այդ օրերը բան մը պատահած էր: Եւ իմացայ հետեւալը:

Նէօլոդոս եւ Սքամպոնի թերթերը ներքին լուր մը հրատարակած են եղեր թէ «երկու բարձրատիճան պաշտօնատար Հայաստան մեկնեցան քննութիւններ կատարելու և բարեկարգութիւններ ներմուծելու հրամանով»: Յակոբ էֆէնտի, տպագրական գրասենեակը նստող ծեր գրաքննիչը, առտուն Արևելքին գալով կը պատուիրէ այդ լուրը չհրատարակել: Երկրորդ էջին «խոհեմ» խրմբագիրը այդ ժամանակները Պոլսէն բացակայ գտնուելուն, միտները չլսելու կը զարնեն այս հրահանգը, եւ բաւական համարելով «Հայաստան» անունին տեղ «Անատոլու», կ'արտատպեն այդ կարեւոր տեղեկութիւնը, առանց այցելու գրաքննիչին իմացնելու թէ՛ առտուն ինչ հրահանգ ստացած են:

Գուշակեցինք թէ զազարումի պատճառը այս ըլլալու էր. մանաւանդ որ փնտոցով նոյն օրուան Ճէրիտէին մէջ տեսայ թէ՛ անիկայ անսացեր է զրուած հրամանին: Յետոյ տեղեկացանք թէ Ճէրիտէի խմբագրին գիտողութեանց վրայ է որ այս խնդիրը ծագեր է:

Պ. Հանլի Սքամպոնի արտօնատէրը, Պ. Վութիրաս՝ Նէօլոդոսիւր եւ Պ. Տամատեան՝ Արեւելքիւր, նոյն օրը Դուռը գացին: Թրքական պաշտօնատունները եւ պաշտօնեաները մօտէն տեսնելու հետաքրքրութեամբ ես ալ ընկերացայ Պ. Ստեփան Տամատեանի: Պապը-Ալին մեզի մտցուցին խրխլակ սենեակ մը, ուր շատ մը զբասեղաններ կային, որոնց շուրջը լուռ մունջ, ծուլաբար կը յօ-

րանջէին խել մը մարդիկ: Պոլսոյ մամուլին հսկիչ մարմինն էր: Քիչ մը ետքն ալ մեզի հրամցուցին ուրիշ սենեակ մը, բաւական շնորհքով շտկուած, մաքուր գրասենեակի մը գլուխը նստած էր կարճահասակ, սև մորուքով, ցած տաճկի դէմքով երիտասարդ մը, տպագրական տեսուչն էր: Նախորդը՝ Մէհմէտ պէյ, պաշտօնանկ եղած էր, և անոր յաջորդած էր այս կրէտացի իսլամը, որուն անունը այս պահուստ չեմ յիշեր: Այս մարդը ամէնուս կարգ մը հարցումներ բրաւ որոնցմէ հասկցանք թէ երեք թերթերուն գաղաբումին պատճառը վերոյիշեալ լուրին հրատարակութիւնն է եղեր: Կարգ մը բացատրութիւններ լռելէ յետոյ հրաւիրեց մեզի վեր ելլել, Միւսթէշար պէյին բովը. այսինքն՝ Ներքին գործերու խորհրդակալինն բով, որուն ուղղակի իրաւասութեանը ներքև է մամուլը:

Պ. Հանլի իրեն հետ ունէր իր թարգմանը, Անմեղեանը, որ վերջի ատեններս շատ ծանօթ եղաւ Եւրոպա: Պ. Վուլթիրաս թարգման առած էր իր խմբագիրներէն Պ. Նիքոլաքի, որ մինչ կը յառուջանայինք զէպի խորհրդակալին սենեակը, առիթէն կ'օգտուէր ինձի գարձեալ յիշեցնելու թէ՛ Շիշմանեան Ղեւոնդ եպիսկոպոսը Պատրիարք ընկու ենք: Այդ երիտասարդ յոյնին ծանօթացած էի քանի մը տարի առաջ, եւ մեծ գովեստով խօսած էր Շիշմանեան եպիսկոպոսին վրայ, զոր ճանչցած էր Անատոլուի Պիլէճիկ քաղաքը: Ու ամէն անգամ որ առիթ կուսնայի իրեն հանդիպելու միշտ կ'ըսէր թէ «ձեր միակ լաւ տարրիարքը այդ եպիսկոպոսը կրնայ ըլլալ:»

Մտանք Միւսթէշարին սենեակը: Կարմիր այտերով, մէկ ուսը վար մէկ ուսը վեր, ճիւղակի պէս բան մը հագած, գարշիլի աչքերով, զգուանք ազդող դէմքով, մարդ մը կար. միւսթէշարը աս է եղեր: Բըտվան պէյն էր որ քիչ ետքը փաշայի տիտղոսով քաղաքապետ եղաւ, և տասը տարի է կը կեղեքէ Պոլիսը:

Գետնի սովորական բարենները ընդունելէ յետոյ, միւսթէշարը նախ խօսքը ուղղեց անգլիացի Պ. Հանլիին, որուն հարցուց թէ ինչո՞ւ առանց գրաքննիչին հաւանութեանը այդ լուրը հրատարակած է: Պ. Անմեղեան հանց տոյց տուաւ գրաքննիչին ստորագրութիւնը, որով արտօնուած էր խնդրի առարկայ եղող լուրին հրատարակութիւնը: Բըտվան պէյ ստորագրութեանը նայեցաւ. «կը նմանի» ըսաւ, և հրամայեց որ գրաքննիչը իր առջևը գայ: Երիտասարդ հայ մը, Մանաս էֆէնտի, որդի համբաւաւոր Մանաս էֆէնտիին, ներս մտաւ, բարև բռնած, զողջըղալով:

- Աս բու ստորագրութիւնդ է, հարցուց միւսթէշարը:
- Հրամմերէք, էֆէնտիմ:
- Ուրեմն զո՞ւն թող տուիր այս լուրին հրատարակութիւնը:
- Հրամմերէք, էֆէնտիմ:
- Ինչո՞ւ թող տուիր:
- Վնասակար բան մը չտեսայ մէջը, ասանկ լու-

րեր միշտ անցած են, եւ ո՛ր եւ է դիտողութիւն չէ եղած Ձեր կողմէն:

— Աղէ՛կ, աղէ՛կ. դուն գնա՛. ես քեզի հետ կը տեսնուիմ պատիժդ կուտամ:

Մանաս էֆէնտի գետնէն երախտագիտական բարեւ մը տալով դուրս ելաւ:

— Լա՛ւ, ըսաւ Պ. Հանլի իր թարգմանին միջոցաւ, կը տեսնէք թէ ես կանոնի համեմատ շարժած եմ, և յանցանք մը չունիմ:

— Աղէ՛կ, բայց ինչո՞ւ հրատարակեցիր: Դուք ալ ուշադիր գտնուելու էք: Երկուքնիդ ալ յանցաւոր էք. ես անոր պատիժը պիտի տամ, դուն ալ բուկինդ առնելու ես:

Եւ մինչ Պ. Հանլի շուարած կը մնար այս փեղցփեղ խօսքերուն, Միւսթէշարը խօսքը ուղղեց Պ. Վուլթիրասի:

— Ո՛ր է նայիմ բու ստորագրուած թուղթդ.

Գրաքննիչը մեզի թուղթ չստորագրեր, պատասխանեց յոյն խմբագիրը:

— Հապա ի՞նչ կ'ընէ.

— Իրեն հարցուցէք: Երկու օրինակ կ'ընէ, մէկը մեզի կը ձգէ, մէկը ինք կ'առնէ:

Յոյն գրաքննիչը կանչուեցաւ: Իրեն եղած հարցումներուն պատասխանեց թէ՛ յունարէն թերթերուն փորձերը երկուք կը հանուին. երկուքին վրայ ալ միևնոյն օրը բազում թիւները կ'ընէ. մէկ օրինակը խմբագրութեան կը ձգէ, միւսը՝ ինք կ'առնէ. յաջորդ օրը կը բազում հրատարակուածը իր բովը եղածին հետ. եթէ փոփոխութիւններ չեն կատարուած, կ'ազդարարէ ուր որ պէտք է:

— Աս լուրը վերցուցի՞ր հարցուց միւսթէշարը.

— Չեմ գիտեր պատասխանեց գրաքննիչը.

— Ո՛ր է պահած փորձդ.

— Շաբաթը անգամ մը կը պատռենք վերջացած բոլոր փորձերը: Երէկ շաբթու գլուխ էր ջնջեցի ինչ որ կար, վասն զի ինչ որ գծած էի ամէնքն ալ վերցուած էին թերթերէն, եւ ես ընելիք դիտողութիւն մը չունէի:

— Ղալիբ ըրեր պատռեր է, ըսաւ միւսթէշարը Վուլթիրասին. ես անոր պատիժը պիտի տամ, բայց դուն ալ յանցաւոր ես: Ու գառնալով գրաքննիչին. «Ի՞նչպէս չես յիշեր թէ այս լուրը վերցուցած ես կամ ոչ:»

— Աչքի չզարնող տեղ մը դրուած ըլլալուն, մանր գրով գրուած, ուշադրութիւն չեմ ըրած:

— Վա՛յ, անանկ մի՛.

— Բայց եթէ աչքիս իսկ զարկած ըլլար, պիտի չընջէի, ըսաւ գրաքննիչը, վասն զի ատոր մէջ Յոյներուն վերաբերեալ խնդիր մը չկար, Հայոց կը վերաբերէր, և ասանկ լուրերը միշտ թող կուտանք:

— Ինչո՞ւ մանր գրով գրած էք ատ լուրը, եւ աչքի չզարնող տեղ մը գրած էք, հարցուց Բըտվան պէյ Պ. Վուլթիրասին:

Խեղճ յոյնը ապշած, բրէլո՞ս ինէ (խե՛նդ է) ըսաւ յու-

նարէն իր թարգմանին. եւ զիտողութեանը պատասխանեց թէ,

— Ատ լուրը ներքիններուն մէջ է. այսքան տարի է ներքինները ինչ տառերով որ կը տպագրենք, եւ ուր որ կը զետեղենք, աս անգամ ալ ճիշտ միեւնոյնը ըրած ենք: Ծանուցումներուն մէջ չենք տարեր զրեր:

— Յանցաւոր էք, յանցաւոր. այս ամէնը զիտմամբ եղած է: Գրաքննիչն ալ պիտի պատժուի, դուք ալ:

Ու խօսքը ուղղելով Պ. Տամատեանին:

— Գանք ձեզի, դ՛ուք ինչ պիտի ըսէք նայինք:

— Մեզի գրաքննիչը թոյլատրեց. մանաւանդ որ այդ լուրը օր մը առաջ ուրիշ թերթեր հրատարակած ըլլալով, հոն փաստակար բան չտեսանք:

— Բայց ձեզի առտուանց Յակոբ էֆէնտին եկեր ըսեր է որ մի՛ հրատարակէք:

Պ. Տամատեան ինծի նայեցաւ:

— Մեր գրաքննիչը ան չէ ըսինք. Երբեմն կը պատահի որ մէկը գայ արգելք մը դնէ, իսկ միւսն ալ արգելքը վերցնէ. ուստի ենթադրուեր է թէ զարձեւալոյ պիտի ինչիւր մըն է. մանաւանդ թէ խմբագիրները կարծեր են որ «Անատուլու» բառին համար է հրահանգը:

— Ձեր յանցանքը շատ մեծ է, շատ: Մէյ մը աս պատիժնից կրեցէք լմնցուցէք. անկէ վերջը զարձեւալ պիտի խօսինք ձեզի հետ ուրիշ կերպով:

Մենք վզերնիս կախ լոնցիք: Անդլիացին ու յոյնը ոտք կոխեցին թէ իրենք օրէնքի, կանոնի համաձայն վարուած ըլլալով իրենց թերթերը դադարուածի պէտք չէր որ դատապարտուէին: Ու ինչ պիտի ընեն ասկէ ետքն ալ, երբ զըրաքննիչին վաւերացուած իրենց համար ապահովութիւն մը չհամարուի:

— Էյ, ինչ ընենք, ըսաւ Միւթէշարը, գրաքննիչը պատասխանատու է, բայց դուք ալ պատասխանատու էք, ուշադիր ըլլալու էք:

Եւ այս ըսելով ճամբեց ամէնքս ալ: Ա՛լ Եւրոպացիներուն հետ որ այսպէս կը վարուէին, մեզի ինչե՞ր չէին ընէր. ինչ եւ է. վար իջանք, նորէն տպագրական տեսչութեան սենեակները զեզերեցանք քիչ մը: Անպաշտօն խորհուրդ տրուեցաւ թէ՛ մէյ մէկ ազերոսգիր զրեցէք, ներողութիւն խնդրեցէք ձեր յանցանքին համար, և թերթերնիդ «ինչալլահ» կը բացուին:

Ինչ ընել: Թիւրքիոյ մէջ Արդարութեան գաղափարին տեղը Ներումի գաղափարն է բռնած: Անդլիացին ալ, Հելլէնն ալ համակերպեցան երկրին սովորութեանցը, եւ մէյմէկ ազերոսգիր մատուցանելով Դուրը բանի մը օրէն թերթերուն վերաբացման հրամանը ստացանք:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

Վերջին շաբաթներս կ. Պոլսէն հասած տեղեկութիւնները քաղաքական ուշագրաւ կարեւորութիւն չեն ընծայեր: Ինչպէս Եւրոպայէն նոյն եւ իսլամական մայրաքաղաքէն ալ ամէն աչքեր յառած են Ծայրագոյն—Արեւելք ուր մեծ ճակատամարտը պիտի մղուի Եւրոպայի եւ զինքն աւտող ժողովուրդներուն միջև: Թիւրքերը կը զգան թէ կըրուին ելքը իրենց ճակատագրին վրայ պիտի ազդէ, ու կասկածոտ հետաքրքրութեամբ կը սպասեն. դէպքերու որոնց Եւրոպացիներուն աննպաստ ըլլալը կը մաղթեն: Երկրորդի բերանը ճանչցուած թերթերը, ինչպէս Իգոտալ, Սաատեք, անխոհեմ անկեղծութեամբ փութացին իսլամներուն ու իրենց խալիֆին թաքուն ըզձերը հրապարակել: Բայց ահա սթափեցան դեսպանական զիտողութիւններէ: Սուլթանը իր թերթերուն սանձը քաշեց եւ ուրիշ ճամբու մը մէջ մտցուց զանոնք: Տկար ձայնով մը Իգոտալ ու Սաատեք փորձեցին դատապարտել չինական խժգժութիւնները ընդդէմ քրիստոնէից, — խժգժութիւններ որոնք վերջին յուրերուն նայելով մտացածին կը թուին: Պոլսոյ թոյլ հրատարակութիւնները իսլամին կը զգացնեն թէ պարտաւոր են առ այժմ «չունենուն բերանը ոսկոր մը նետել որպէս զի շատ չհաջեն մինչեւ որ անոնց նախէն զալու աւտենը հասնի:»

«Կեանքներուն հախէն դալ», ահա՛ իսլամին ամբողջ մտատանջութիւնը, քաղաքական մեծ նպատակը: Չինաստանի մէջ Եւրոպայի պարտութիւնը, կամ մեծ պետութեանց անհամաձայնութիւնը աղիտաբեր հետեւանքներ կը սպառնան Թիւրքիոյ ո՛չ միայն սուլթանակառակ քրիստոնէից այլ բոլոր Եւրոպացիներուն: Սրբաւարտ ծայրագոյն պահպանողական եւ կառավարական ամենալուրջ թերթը կ. Պոլսէն ստացած կարևոր տեղեկութիւններով, զոր իր յուլիս 21 թիւին մէջ հրատարակեց, ապագային համար շարագուշակ երկիրդներ կը յայտնէ:

Նամակագիրը կը յայտարարէ թէ ինքը մին է անոնցմէ որոնք պատեհութիւն կը վայելեն զիտել ինչ որ Չինաստանի դէպքերուն առթիւ Թիւրքիոյ մէջ կ'անցնի կը դառնայ, և մեծ վախեր ունին որ հոն ալ զգալի կրնան ըլլալ Չինաստանի ահեղ ողբերգութեանց հետեւանքները:

«Ընդունուած իրողութիւն մըն է, կ'ըսէ նամակագիրը, թէ Թիւրքիան վարող միւսիւլման գասակարգերը որոնք տարիներէ ի վեր զսպուած կը մնային քաղաքակիրթ Պետութիւններուն անոնց վրայ դրած սանձէն, ինչպէս նաև Չինացիներն ալ, հիմակ հաճուհաւան աչքերով կը զիտեն օտարականներու դէմ Չինաստանի հետեւած ընթացքը:

«Ա՛խ, եթէ մենք ալ կարենայինք ո՛ր և է միջոցով, ո՛ր և է զոհոհուութեամբ մէյ մը սա անիծեալ Ֆրէնկները

վնտել, ինչպէս Չինացիները կ'ընեն», այս է ահա թիւրքիան կառավարող գասակարգին գրեթէ ամէն անգամներուն յայտնած կամ գաղտնի պահած ըզձանքը: Եւրոպացիները որոնք եւրոպական ըմբռնումներու համեմատ կը տրամաբանեն, բնականաբար պիտի հարցնեն թէ «միթէ թիւրքերը չեն գիտեր որ իրենց երկիրը Չինաստանէն շատ տարբեր դիրքի մէջ կը գտնուի, եւ թէ Եւրոպացիներուն զէմ պայթումի մը առաջին նշանը նաև իրենց երկիրին գրաւումը եւ թագաւորական բնտանիքին վախճանը պիտի նշանակէ:» Արեւելցիին չեն ճանչնար անոնք որ այսպէս կ'առարկեն, ու միանգամայն գաղափար չունին թէ անիկա երբ կը գործէ երբեք ապագայի վախերու ազդեցութեան ներքև չգտնուիր: Ներկային մէջ օրուան մղումին համեմատ կը շարժի, ապագան Նախախնամութեան կամ «Խըսմէթ»ին ձգելով: Ապագային համար այս արհամարհանքը երևան չի գար թիւրքիոյ ամբողջ պատմութեան մէջ, եւ սաանաւորապէս այս վերջին քանի մը տարիներս, նոյն իսկ Պիտուութեանց քթին ներքև, գրեթէ երկու հարիւր հազար քրիստոնէից ջարդովը: Իրողութիւն մը չէ՞ որ 1895ին եւ 1896ին արտաքին միջամտութիւնը արգելող պատճառներէն մէկն ալ, թէև անուղղակի, թիւրքիոյ Եւրոպական դաղթականութիւնները ամէնքն ալ ջարդելու սպանալիքն էր, սպանալիք որ գրեթէ գաղտնի չպահուեցաւ:

«Տարօրինակ պիտի չթուի ուրեմն որ ինչպէս ես նըմանապէս եւ ուրիշ շատեր իրաց կացութիւնը լաւ ճանչնալով շատ կը վախնանք Չինաստան քաղաքակիրթ Պետութեանց տկարացումին հոս ունենալիք հետեւանքներէն: Եթէ անդին անանկ ահեղ դաս մը շտրուի որ ազդէ Արեւելեան աշխարհին վրայ, տարակոյս չի կայ թէ յուզում առաջ պիտի բերեն, ու այսպիսի երկիրներու մէջ այնպիսի արդիւնքներ պիտի ունենան որոնք պիտի ստուերեն Բեքինի դէպքերը: Թո՛ղ չի մոռցուի թէ Եւրոպացիին հոս ալ ճիշտ այնպէս ատելի է ինչպէս Չինաստան, թէ օտար գաղթականութիւնները յաճախ հոս աւելի բազմաթիւ են քան թէ Չինաստան, եւ բազմաթիւ բնիկներուն աւելի առաջնակարգ տեղ կը գրաւեն քան Չինաստան: Անցեալին մէջ թիւրք կառավարութիւնը շնորհիւ Պետութեանց սխալ քաղաքականութեանը եւ բաժանումներուն, հետզհետէ աւելի գոռոզացաւ, և առջին բաց ասպարէզ ունեցաւ օտարականները վանելու համար ձեռքէն եկածը բնել, մինչեւ իսկ գրաւելով անոնց օրինաւոր կալուածները որոնց վրայ Եւրոպականները աչք տնկած էին: Գիտենք թէ այս քաղաքականութիւնը օրէ օր աւելի կ'աժդակուի, եւ օրին մէկը Եւրոպայի ընդդիմադրութեանը պիտի բաղխի և խոսովութիւն առաջ պիտի բերէ: Մենք բնականաբար չենք գիտեր թէ ապագան ինչ պիտի ծնի, բայց գիտենք թէ այս երկրին մէջ կացութիւնը մեզի վրդովելու հանգամանք ունի, եւ թէ Չինաստան քաղաքակիրթ Պետութեանց ո՛ր եւ է տկարացում այս տեղ հակադարձ արդիւնք

պիտի ունենայ, պիտի ցածցնէ քաղաքակիրթութեան պատկառանքը, եւ զարհուրելի գալարում առաջ պիտի բերէ:

\* \* \*

Թէև տակաւին մինչեւ յուլիս 31 Պոլսէն տեղեկութիւն չհասաւ թէ ինչ տպաւորութիւն գործած է Եւրոպացի վրայ Խտալիոյ Ումպերթօ թագաւորին եղբրական վախճանը, սակայն կրնանք իբր ստոյգ իրողութիւն ընդունել թէ սուլթանը սարսափի մատնուած է: Երբ 1894ին Փրանսայի հանրապետութեան նախագահը սպանուեցաւ Խտալացի անիշխանականի մը ձեռքէն, սուլթանը այնքան զարհուրեցաւ որ նոյն օրը իսկ անապարեց ընդունել Ալբրեան Պատրիարքին հրաժարականը, զոր դեռ երկու օր առաջ անգամ մը եւս մերժած էր, յայտարարելով թէ յաւարիւարը մը իր հրամաններուն պիտի հնազանդի եւ ոչ թէ յեղափոխական գնտակին: Իրաւ է որ վեց տարուան մէջ Պոլիս Հայոց կացութիւնը փոխուեցաւ, բայց սուլթանը անշուշտ չմտաբերեր թէ անխռով հանդարտութեամբ ապրելու ապահովութիւնը կրնայ ունենալ:

Սուլթանը վրդովելու պատճառներ ունի: Անիշխանականները որոշած են չորս վեհապետ եւս սպաննել, եւ շատ հաւանական է որ Սուլթան Համիտն ալ դատապարտեալներուն մէջ գտնուի: Բաանոյի, Աւստրիոյ կայսրուհիին, Ումպերթօ թագաւորին սպաննութիւնները Անիշխանականներուն զօրութիւնը թէև հաստատեցին, բայց զանոնք համակրելի ընծայելու չժառայեցին: Սուլթան Համիտին սպաննութիւնը Անիշխանականներուն բարոյական վարկը կրնայ բարձրացնել. մարդասիրական եւ քաղաքակրթական մեծ գործ մը կատարած պիտի նկատուին: Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ բողոքի ձայն մը պիտի չբարձրանայ: Ընդհակառակը:

ԻՍԼԱՄ ՎԵՇԱՊԵՏՆԵՐԸ

Պարսկաստանի Շահը որ այս միջոցիս Բարեզ կը գտնուի, Ֆրանսայի մայրաքաղաքին Հայոց խորին յարգանքներուն հաւաստիքը ընդունեց: Շահը քիչ օրէն Լոնտոն պիտի գայ ուր Պարսկահպատակ եւ ոչ-պարսկահպատակ Հայերը նախաձեռնութեամբ Պ. Կարապետ Յակոբեան իրենց մեծարանքները պիտի մատուցանեն պարսիկ վեհապետին արևելեան ճաշակով պարսկերէն ուղերձի մը միջոցաւ:

Եգիպտոսի Խտիվին Լոնտոն այցելութիւնն ալ պատկանութիւն ընծայեց Հայոց իրենց շնորհա կալութիւնները

յայտնել երիտասարդ իշխանին որուն երկրին մէջ Հայերը  
շատ մեծ մարդասիրական ընդունելութիւն եւ պաշտպա-  
նութիւն գտան այս աղէտաւոր տարիներս: Պ. Կարապետ  
Յակոբեան, իբր Լոնտոնի հայ գաղութին երեց եւ հեղինա-  
կաւոր ներկայացուցիչը, շնորհակալութեան ուղերձ մը  
մատուց խտիվին, արապերէն եւ անգլիերէն լեզուներով  
որմէն կը քաղենք հետեւեալը:

Տէ՛ր իշխան,

« Լոնտոնի հայ բարեկամներս եւ ազգակիցներս օգ-  
տուելով Ձերդ Բարձրութեան հոս ներկայութենէն, իբր  
մեծարեալ հիւր Նորին Գերաշնորհ եւ Սքանչելափառ Թա-  
զուհի-Կայսրուհիին, խնդրեցին ինձ Ձերդ Բարձրութեան  
մատուցանել հաւաստիքն իրենց անկեղծ շնորհակալու-  
թեանց եւ երախտագիտութեան, այն բոլոր դիւրութիւն-  
ներուն համար զոր Եգիպտական կառավարութիւնը աը-  
ւաւ, եւ այն բոլոր օգնութեանը համար զոր Եգիպտոսի  
ժողովուրդը ընձեռեց մեր հայ ապաստանաւորներուն որոնք  
փախած էին կազմակերպեալ կոտորածներէն եւ աւարա-  
նութենէն որոնք թիւրքիոյ ասիական քաղաքներ սւ զիւ-  
ղեր աւերեցին, եւ Պոլսոյ փողոցներն ու թաղերը արիւ-  
նաներկեցին 1894-95 եւ 96 թուականներուն: Այս կո-  
տորածները ու սարսափահարութիւնները եղաւ, այսպէս  
ըսենք, Թրքական պատասխանը մեր այն օրինաւոր խընդ-  
րանքներուն որով արդարութիւն եւ վարչական բարենորո-  
գում կուգէինք մեր հինաւուրց հայկական հայրենիքին  
մէջ, խնդրանքներ որոնք Պերլինի գաշնագիրը ստորագրող  
Եւրոպական մեծ պետութեանց վաւերացումը և աջակցու-  
թիւնը ստացած էին:

Ձեր Խտիվական Բարձրութեան եւ Ձերդ Բարձրու-  
թեանը միջոցաւ Եգիպտոսի ժողովրդին շնորհակալութիւն  
յայտնելու պատեհութենէն օգտուելով կ'ըղձանք մեր շը-  
նորհակալութիւնները մատուցանել Ձերդ Բարձրութեան  
այն ակնբեր ընդհանուր յառաջդիմութեան համար զոր Ե-  
գիպտոս օրըստօրէ կ'ընէ Ձերդ Բարձրութեան իմաստուն  
և բարեբար կառավարութեան ներքեւ, որուն այնքան բա-  
րեբախտօրէն կը նպաստէ Մեծն-Բրիտանիոյ հայրախնամ  
հոգածութիւնը եւ հեռատեսութիւնը:»

Ուղերձին վերջին մասը կը խօսի այն ծառայութեանց  
վրայ զոր նշանաւոր հայեր ինչպէս Պողոս պէյ եւ Նու-  
պար փաշա մատուցին Եգիպտոսի, եւ յոյս կը յայտնէ  
սր այդպիսի խելացի եւ ուղղամիտ հայ ծառայողներ պի-  
տի չպակօին Եգիպտոսի համար:

ԼՈՒՐԵՐ

ԷՆԻՉ ՓԱՇԱ. Կիլիկիոյ մէջ ընդհանուր վրդովում  
կը տիրէ այս չարագործին Հայկալի կոչուակալ անուան-  
ուելուն ասորի: Լոնտոն անգլիական կառավարութեան  
հասած տեղեկութեանց համեմատ, Էնիզ փաշայի գլխա-  
ւոր ջանքը պիտի ըլլայ Զեյթուն քան Սասունը առելի  
վատարացնել, աւերելով այդ լեւները և ընաչիւնջ ընե-  
լով ամբողջ հայ ժողովուրդը:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Պարսից Շահը նախ  
քան Բարիզ այցելելը Ֆրանսայէն գնաց Բեդրպուրի ուր  
ամենամեծ ընդունելութիւն գտաւ: Այցելութեան ամբողջ  
միջոցին տոշակակալ մամուլը դրոշատեց եւ փաղաքշեց  
Շահը: Այս ասփռ Օտեսայէն հետեւեալ ժանրակիչ տե-  
ղեկութիւնը կը հետագրուի Սթանտարտի: «Պաշտօնա-  
կան աղբիւրէ մը ինձի ապահովեցին որ Ռուսիոյ կայ-  
սերական կառավարութիւնը օգտուելով Շահին տոշակակալ  
արքունիքին և մայրաքաղաքին տոշած այցելութեան, կա-  
րող եղաւ հաճոյակատար Պարսիկ ինքնակալին առանց  
դժուարութեան ստանալ այն ամէն տեսակ «քաղաքական,  
առևտրական եւ բարոյական շնորհումները» զոր իր  
ձեռքը ունենալ կոչուի: Ասկէ ետքը ա'լ Պարսկաստանը  
կրնայ գործնականապէս Ռուսիոյ գերիշխանութեան ներ-  
քէ պետութիւն մը նկատուիլ: Շահը Անգլիոյ մայրաքա-  
ղաքին մէջ ինչ որ ալ լսէ, ինչ որ ալ տեսնէ հառանակալ  
չէ որ Բեդրպուրիկի եւ Բեքերհոֆի իր վրայ բողած տպա-  
ւորութիւնը փոխուի:

ՀԱՍՑԷ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին  
եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10  
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2  
ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին  
ղրկել առ՝

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.